26 июня прибыл из командировки. Приказом по армии и флоту о военно-сухопутных чинах от 11 сентября назначен командующим Армянской стелковой бригады /Приказ по штабу округа 1917г. 18 сентября/. Приказом по армии и флоту от 23 октября назначен в резерв чинов при штабе Кавказского военного округа по обстоятельствам текущих событий 23 октября. 1918г. приказом по Отдельному Армянскому корпусу от 6 марта №5 допускается к командованию Сводным армянским отрядом.

Согласно распоряжению Военного Министра командирован в Тифлис для ликвидации частей вверенного ему Сводного отряда. 1918г. 16 августа.

Национальный архив Армении, Ф.121, по. 1, д. 1, л. 47-47а. Опулб: Карапетян М.Л., Воины – армяне в русской армии (конец XIX-начало XX вв.), Е., 2008, с. 69-70 (на арм. яз.)

**ПОСЛУЖНОЙ СПИСОК НАЧАЛЬНИКА ШТАБА
СВЕАБОРГСКОЙ КРЕПОСТИ, ГЕНЕРАЛЬНОГО
ШТАБА ПОЛКОВНИКА АХВЕРДОВА**

<p>I Имя, отчество и фамилия</p>	<p>Полковник Иван Васильевич Ахвердов</p>
<p>Должность по службе</p>	<p>Начальник Штаба Свеаборгской крепости</p>
<p>II Ордена и знаки отличия</p>	<p>Имеет ордена: Св. Анны 4 ст. с надписью "За храбрость", Св. Станислава 3 ст. с мечом и бантом, Св. Анны 3 ст. с меч. и бант., Св. Станислава 2 ст. с меч., Св. Анны 2 ст. с меч., и Св. Владимира 4 ст. с меч. и бант. Медали: Серебряные: В память Царствования Императора Александра III-го и Св. Коронования Их Императорских Величеств. Темно-бронзовую в Память всеобщей переписи населения России в 1897г. и светло-бронзовые: В память Русско-Японской войны 1904–1905гг. и 300-тия Царствования Дома Романовых. Бухарский орден Золотой Звезды 2 степени.</p>
<p>III Когда родился</p>	<p>29-го Июля 1873г.</p>
<p>IV Из какого звания происходит и</p>	<p>Сын действительного Статского Советника города Петрограда</p>

какой губернии уроженец	
V Какого вероисповедания	Армяно-Григорианского
VI Где воспитывался	<i>Общее:</i> в 1-м кадетском корпусе, <i>военное:</i> окончил полный курс наук в 1-м военн. Павловском училище по 1-му разряду и в Николаевской Ака- демии Генерального Штаба окончил 2 кл. по 1 разряду и дополнит. курс на “успешно”
VII Получаемое на службе содержание	Жалования в год..... 1200 руб. Столовых.....1560 руб. <u>На наем прислуги.....120 руб.</u> Всего.....2880 руб. и сверх того ка- зенную квартиру

Составлено в 1915г.

Российский государственный военно-исторический архив, ф. 409, оп. 1, д. 50942, л. 1 об. Оpubл.: Карапетян М. Л., Воины-армяне в русской армии (конец XIX –начало XX века) Е., 2008, с. 66-67:

ВЫПИСКА ИЗ ПОСЛУЖНОГО СПИСКА ГЕНЕРАЛ – МАЙОРА АРАРАТОВА ХРИСТАФОРА ГЕРАСИМОВИЧА

Родился 18 июня 1876г. в Налчике в семье военнотружущего. В 1893г. окончил Тифлисский кадетский корпус, 1896г. — специальное Михайловское артиллерийское училище и офицерскую школу в Царском селе (СПб.). Везде окончил полный курс.

С 1896г. августа 12-го по 25 августа 1914г. был офицером в Кавказской Гренадерской артиллерийской бригаде в г. Тифлисе. За этот период с мая месяца 1905г. по 25 марта 1906г. был на Дальнем Востоке офицером в 30-ой артиллерийской бригаде и участвовал в Русско-Японской войне на позициях у Сыпи Гая и Херсу.

С 28-го августа 1914г. по октябрь 1914г. был офицером и командиром 1-ой батареи 21-ой артиллерийской бригады на Западном фронте.

С октября 1916г. по 25 декабря 1917г. штаб — офицером в Русской артиллерийской миссии в качестве инструктора в Румынской артиллерии на позициях.

С января 1918г. по 30 октября 1920г. офицером и командиром Армянской артиллерийской бригады, военным министром и инспектором артиллерии войск Армении.

С 20 октября 1920г. по 19 октября 1921г. был в плену у турок (будучи взятым в г. Карс в турецко-армянскую войну).

В русской царской армии был командиром батареи в чине полковника, в Армянской армии командиром Артиллерийской бригады — полковником, военным министром и инспектором Артиллерии — Генерал-майором.

В Красной Армии с 27 октября 1921г.. С 27.10.21г. по апрель 1922г. был инспектором артиллерии ССРА и предсе-

дателем комиссии по строевой подготовке войск Армянской Сводной бригады.

С апреля 1922г. по август того же года командиром Армянского артиллерийского дивизиона. С сентября 1922г. Начальником артиллерии и заместителем командира Армянской стрелковой дивизии (до 1925г.)

В 1926г. окончил высшие курсы повышения квалификации комсостава при Военной Академии им. Фрунзе.

Центральный государственный архив советской армии, ф. 1535, оп. 1, д. 2, л. 33—34. Оpubл.: Карапетян М. Л., Воины-армяне в русской армии (конец XIX — начало XX века), Е., 2008, с. 67-68 (на арм. яз.).

№ 5

ХОДАТАЙСТВО УПРАВЛЯЮЩЕМУ ВОЕННЫМ МИНИСТЕРСТВОМ О РАЗВЕРТИВАНИИ АРМЯНСКИХ ЧАСТЕЙ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ И ФОРМИРОВАНИИ ОСОБОГО АРМЯНСКОГО АРМЕЙСКОГО КОРПУСА

ГОСПОДИНУ УПРАВЛЯЮЩЕМУ ВОЕННЫМ МИНИСТЕРСТВОМ

На пути к осуществлению резолюции Военного и Морского Министра А.Ф.Керенского, коей признавалось “своевременным безотлагательное развертывание армянских стрелковых батальонов в полки и сформирование из них дивизий”, шесть армянских стрелковых батальонов развернуты в двухбатальонные полки и сформировано управление бригады /приказы Верховного Главнокомандующего 19-го июня с.г. за № 480 и 28-го июня с.г. за № 540/.

Ныне, для окончательного осуществления предположенного преобразования в пределах указанной резолюции, имею-

щиеся шесть двухбатальонные полки необходимо перестроить в восемь трехбатальонные.

Доказанная боевая устойчивость армянских частей вполне выдержавших испытание также в последнее время, причём, некоторые отдельные части целиком переименовали себя в полки смерти, делает особенно необходимым целесообразное использование их при современных боевых и политических условиях, предоставлением им особого участка боевого фронта в Малой Азии. В видах упрочения там общего русского фронта и для выполнения общегосударственных задач.

Вследствие этого необходимо теперь-же, одновременно с развертыванием полков, свести их в предусмотренные резолюцией А.Ф.Керенского дивизии.

Сформированные таким образом восемь трехбатальонные полки – удобно свести /по четыре/ в две дивизии, сформировать из них особый армейский корпус.

При этом : I. Каждой дивизии придать:

а/ Управление дивизии.

б/ Одну артиллерийскую бригаду из трех дивизионов: из коих два, - каждый в три 4-х орудийные легкие и горные батареи и один – в две 4-х орудийные гаубичные батареи.

в/ Одну отдельную инженерную роту.

г/ Парковую артиллерийскую бригаду.

д/ Два дивизионных лазарета.

е/ Перевязочный и дезинфекционный отряды.

ж/ Дивизионный обоз.

II. Корпусу-же придать:

а/ Управление корпуса.

б/ Бригаду из двух конных полков /четырёх эскадронного состава/, развёрнутых из имеющихся при армянских стрелковых полках конных частей.

в/ Дивизион тяжелой артиллерии /в три батареи 42 линейных и 6-ти дюймовых пушек/.

- г/ Инженерный полк.
- д/ Авиационный отряд.
- е/ Радиотелеграфное отделение.
- ж/ Грузовое автомобильное отделение.
- з/ Две полевые хлебопекарни.
- и/ Корпусный продовольственный транспорт.
- й/ Два запасных пехотных полка, по одному на дивизию.

Если-бы указанное развёртывание армянских частей встретило затруднение в снабжении технической и материальной частью, то это не должно служить препятствием, в первую очередь можно будет снабдить лишь необходимым для самого существования частей; остальное может быть дано постепенно.

Что-же касается личного состава, то затруднений не встретится, как вследствие наличия нужного количества солдат в составе запасных частей Кавказского фронта, так и нижеследующих мероприятий, которые исключают необходимость брать личный состав из остальных четырех фронтов. Именно, назначить на Кавказский фронт:

1. — Всех желающих офицеров, военных врачей и прочих классных чинов и солдат армян, всех родов войск и специальностей, ныне состоящих, вне действующей армии на службе в войсковых частях, штабах, управлениях, учреждениях и заведениях военного ведомства, а равно числящихся в резерве чинов при штабах округов, находящихся на учете эвакуационных пунктов и воинских начальников и выбывающих из лечебных заведений по выздоровлению.

2. — Все комплектования из армян, находящихся во всех запасных и учебных частях.

3. — Всех армян, оканчивающих училища и школы и производимых в офицеры, а также обучающихся на каких-бы то ни было подготовительных курсах вне действующей армии, по окончании учения.

4. – Всех прибывающих на Кавказ эвакуированных офицеров, военных врачей и классных чинов и солдат армян, с их согласия.

5. – Всех дезертировавших на Кавказ армян солдат.

В виду очень малого процента армян, разбросанных всюду (едва 1%), выделения, согласно пунктов 1 и 2, не могут быть сколько-либо ощутительны для частей, из которых они выделяются, назначения-же по пунктам 3-5, вовсе не отразятся на полноте комплектования нашего западного фронта.

Петроград.

Августа “ “ дня 1917 года.

Национальный архив Армении, ф. 121, оп. 1, д. 1, с. 18-19.

N 6

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՅ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԲԱՆԱԿԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական լեգիոնի հրամանատար Պոժեն տեղեկացնում է – Կիլիկիայի Հայկական ազգային միությանը հունիսի 19-ին գրած պաշտոնական նամակով, որ հայ լեգեոներներ տասնապետ Ս. Հավուջյանը, տասնապետ Ա. Ամերիկյանը, տասնապետ Կ.Չիլիջյանը, տասնապետ Հ.Պետրկյանը, Ն.Տերտերյանը, Վ.Դրուկչյանը, Ղուկասյանը, Գերասյանը 1918թ. սեպտեմբերի 19-ին Արարա /Պաղեստին/ լեռան վրա հերոսական կռվում ընկել են պատվո դաշտում: Նրանց անունները նշված են բանակի պատվո մատյանում և նրանք արժանացել են պատերազմի խաչի:

Ըստ ֆրանսիական տրադիցիաների այդ խաչերը կհանձնվեն նրանց ընտանիքներին:

Խաչերի հանդիսավոր հանձնման օրը նշանակված է հուլիսի 14-ին, Կիլիկիայի մայրաքաղաք Ադանայում:

1919թ. հուլիսի 18-ին
Փարիզ

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 131, ք. 128 ա:

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯН – УЧАСТНИКОВ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ В ОЦЕНКЕ ИЗВЕСТНЫХ ПОЛИТИЧЕСКИХ И ВОЕННЫХ ДЕЯТЕЛЕЙ

Лорд Роберт Сесил 3 октября 1918г. написал: “В начале войны русские армяне организовали добровольческие войска, которые выдержали атаки самых тяжелых боев Кавказской кампании. После разгрома русской армии в прошлом году армяне взяли на себя Кавказский фронт (больше двухсот верст длиной), боролись с турками пять месяцев, и таким образом, оказали очень важную службу британской армии в Месопотамии. (Они также отбили Баку от турко-татар и держали его с марта по июнь 1918 до прибытия англичан). Они также служили в британской, французской и американской армиях и внесли свой вклад в победу генерала Аленби в Палестине. Услуги, оказанные армянами никогда не могут быть забыты”.

Экс-премьер
Керенский 20 августа,
1918г. сказал:

//

“Во время внезапного начала войны турки захватили Сари-Камыш и продвигались к Тифлису. Все высшие офицеры, включая вице-короля, готовились к жестокой битве. Из всех кавказских наций, только армяне остались на своих постах, организовали добровольческие силы и на стороне русского командования встретили грозные атаки врага и ввергли в беспорядочное бегство.

Генерал Игсан Паша: Командир правого крыла турецкой армии на Кавказе.
27 июля, 1915 говорил:

“Мы победоносно наступали на Кавказ, когда со вступлением армян, русское правое крыло стало укрепляться. Затем я приказал свежим силам атаковать русских слева. Но войска были задержаны на три дня армянскими вооруженными силами и прибыли очень поздно на место битвы чтобы спасти нас от ужасного поражения, которое мы потерпели. Я не обвиняю армян. Мы с ними плохо обошлись. Но я должен признаться, что если бы ни армяне, мы бы захватили Кавказ. Если бы мы захватили раньше, союзники не выиграли бы войны. Мы бы имели и весь мусульманский мир на нашей стороне, что заставило бы Великобританию послать войска с Западного фронта на Восток, таким образом, дали бы Германии возможность победить Францию. Российские армяне имели право бороться с тур-

ками, сначала, турецкие армяне не поднимали оружия против турок, пока на них не напали.

Генерал Лиман фон Сандерс, немецкий командующий в Сирии после турецкого отсутствия

Падение фронта турецкой Палестины произошло благодаря тому факту, что турки наперекор любому приказу и совету, послали все свои жизнеспособные войска на Кавказ и Азербайджан, где они боролись с армянами.

Генерал Алленби после разгрома турок в Палестине телеграфировал президенту Армянской национальной делегации, Париж:

“Я горд, что имею под командованием армянские войска. Они боролись великолепно и имеют большую долю в победе”.

**ВОИНЫ-АРМЯНЕ
УЧАСТНИКИ
ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ
(1914 – 1918 гг.)**



ПЕТР ОГАНОВСКИЙ



ЛЕВОН ТИГРАНОВ



ЯКОВ БАГРАТУНИ



ИВАН АХВЕРДОВ



АНДРЕЙ АТАБЕКОВ



ГАВРИИЛ КОРГАНОВ



ТОВМАС НАЗАРБЕКЯН



ЛЕВОН ПОЗОВ



ПАВЕЛ СУЛТАН-ШАХ



АНДРАНИК ОЗАНЯН



МОВСЕС СИЛКЯН



ХРИСТАФОР АРАРАТОВ



ДЖАНПОЛАДЯН



ДРО



ГАРЕГИН НЖДЕ



ГАЙК БЖШКЯН (ГАЙ)



ПАВЕЛ БЕК-ПИРУМОВ



ОВСЕП АРГУТЯН



МИКАЕЛ МЕЛИК-МУРАДОВ



КЕРИ



АМАЗАП



ЛЕГЕОНЕР АБЕТ ИСКЕНТЕРЯН



ЛЕГЕОНЕР МИСАК АВУНЧЯН



**ГЕНЕРАЛЫ
Я.БАГРАТУНИ И АНДРАНИК**



**КОМАНДИРЫ АРМЯНСКИХ
ДРУЖИН
АМАЗАСП, КЕРИ И ВАРДАН**



**КОМАНДИР АРМЯНСКОГО
КОРПУСА ГЕНЕРАЛ НАЗАРБЕКЯН
ВМЕСТЕ С ПРЕДСТАВИТЕЛЯМИ
ФРАНЦУЗСКОЙ ВОЕННОЙ МИССИИ
НА КАВКАЗЕ**



**ПАДУХТ ВМЕСТЕ С КОМАНДОВАНИЕМ 6-ОЙ АРМЯНСКОЙ
ДОБРОВОЛЬЧЕСКОЙ ДРУЖИНЫ**



АРМЯНЕ-ДОБРОВОЛЬЦЫ ВО ФРАНЦУЗСКОЙ АРМИИ



**ПАМЯТНИК АРМЯНАМ-ДОБРОВОЛЬЦАМ
ФРАНЦУЗСКОЙ АРМИИ (ФРАНЦИЯ)**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1914թ. օգոստոսի 1-ին բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Պատերազմի սկսվելուց անմիջապես հետո, 1914թ. օգոստոսի 2-ին, Կոստանդնուպոլսում դաշնագիր կնքվեց Գերմանիայի և Թուրքիայի միջև, որով Գերմանիան հանձն էր առնում Արևելքում հասնել Օսմանյան կայսրության սահմանների այնպիսի փոփոխության, որը վերջինիս հնարավորություն կտար անմիջական կապ հաստատել Ռուսաստանի մուսուլմանական տարրերի հետ: Գերմանիան պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում դաշնակցի շահերը պաշտպանել նաև զենքով¹:

Գերմանա-թուրքական պակտով ոգևորված՝ Թուրքիայի ռազմական նախարար, «նորաթուխ Նապոլեոն» էնվեր բեյը հայտարարեց. «Տարակույս չկա, որ մենք պիտի կրնանք Թուրանի ճամփան բանալ և թուրք միությունը ապահովել»²: Թուրքիայի պետական գործիչների ոգևորությունը զգացվում էր ամենուր: Ուիմստոն Չերչիլը նկատել է, որ ոչ մի պետություն այնպես սիրով չի մտել համաշխարհային պատերազմի մեջ, որքան Թուրքիան³: Պատրաստվելով պատերազմին՝ Թուրքիան առաջին իսկ օրերին զենքի կոչեց մոտ մեկ միլիոն մարդ՝ պառակտիչ աշխատանքներ տանելով քրդերի, հայերի, լազերի և այլ ժողովուրդների շրջանում: Նա քրդերին վախեցնում էր «հայկական ինքնավարությամբ», նրանց հրահրում հայերի և Ռուսաստանի

¹ Ключников Ю.В., Сабанин А.В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2, М., 1926, с. 8-9.

² Մեվլան զադե Բիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Ե., 1990, էջ 22:

³ Տե՛ս Չերչիլ Կ., Мировой кризис, М.-Л., 1932, с. 242.

դեմ: Թուրքերը հայերից պահանջում էին Կովկասում ապստամբություն բարձրացնել Ռուսաստանի դեմ: Նրանց շողոքորթելով՝ նսեմացնում էին հարևանների արժանապատվությունը, հայերին խոստանում ավելի լայն ինքնավարություն, քան նախատեսվում էր Ռուսաստանի առաջարկած բարեփոխումների ծրագրում: Թալեաթ բեյը, թուրքական կառավարության ներկայացուցիչներ Նեջի, Հալիլ, Շաքիր բեյերը հայերին խոստանում էին իրենց կողմն անցնելու դեպքում նրանց հանձնել Երևանի և Գանձակի նահանգները, Կարսի, Վանի, Բիթլիսի շրջանների մի մասը: 1914թ. հուլիսին էրզրումում հանդիպումներ ունենալով ՀՀ Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի պատվիրակներ Ակնունու, Ռոստոմի և Վռամյանի հետ՝ թուրք էմիսարները ներկայացրեցին իրենց պահանջները խնդրո առարկայի հարցում՝ շեշտելով, որ Ռուսաստանի ջախջախման պահը մոտեցել է: Մերժողական պատասխան ստանալով՝ թուրք պատվիրակները հայտարարեցին, որ առանց հայերի էլ կհասնեն իրենց նպատակին՝ սպառնալով, թե՛ «այն ժամանակ թող հայերը չդժգոհեն, եթե իրենց ճակատագիրը տխուր ընթացք ստանա»⁴: Չհաջողվեց նաև Իթքիատի խարդավանքը՝ շահարկել ցարական կառավարության կողմից դաշնակցության դեմ ձեռնարկված հալածանքների և բռնությունների փաստը: Մերժելով Իթքիատի առաջարկները՝ ՀՀ Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը որոշեց, որ հայ ժողովրդի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հատվածները պետք է կատարեն իրենց քաղաքացիական պարտքը՝ պետությունների խմբակցությունների գործողությունների ընթացքում մնալ չեզոք, լինել օրինապահ քաղաքացիներ ամեն տեղ, մասնավորապես Թուրքիայում: Հայ գործիչները, հայտարարելով Թուրքիայի նկատմամբ իրենց լոյալության մասին, միաժամանակ պարզաբանում

⁴ *Հեն*, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1935, հ. Բ, էջ 77-78:

էին, որ հայերը Կովկասում Ռուսաստանի դեմ ապստամբություն չեն բարձրացնի⁵:

Հավատարիմ մնալով օսմանիզմին՝ երիտթուրքերը, անգլիացի պատմաբան Վ.Յոտլիբի դիպուկ արտահայտությամբ, առավելապես դրսևորեցին թուրքական իմպերիալիզմին բնորոշ երկու գաղափարախոսության՝ «քաղաքական՝ համաթուրքիզմի և կրոնական՝ համիսլամիզմի յուրահատուկ զուգակցումը»⁶:

Առաջացած խմբավորումները՝ Համաձայնության երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և Քառյակ միություն (Գերմանիա, Ավստրո-Յունգարիա, Բուլղարիա, Թուրքիա), հստակորեն դրսևորում էին այն հակասությունները, որոնք կային Անգլիայի և Գերմանիայի, ինչպես նաև Ֆրանսիայի և Գերմանիայի միջև էլզաս-Լոթարինգիայի համար, Գերմանիայի և Ռուսաստանի միջև՝ Կոստանդնուպոլսի և Բոսֆոր ու Դարդանել նեղուցների, Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ Հայաստանի և Կոստանդնուպոլսի, Ավստրո-Յունգարիայի և Ռուսաստանի միջև՝ Բալկաններում գերակշռող դիրք ունենալու, Ավստրո-Յունգարիայի և Իտալիայի միջև՝ Ալբանիայի և այլ տարածքների համար: Բացի դրանից Անգլիան ձգտում էր գրավել Միջագետքը, Պաղեստինը, Արաբական թերակղզին, Ֆրանսիան, Սիրիան, Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային մասը: Գերմանիան նպատակ ուներ նվաճել ոչ միայն Ուկրաինան, Լեհաստանը, Մերձբալթիկան, Ֆինլանդիան, այլև Անդրկովկասը:

Պատերազմը շարժման մեջ դրեց հայ ժողովրդի քաղաքական-հասարակական բոլոր մտավոր ուժերին՝ իր հորձանուտի մեջ առնելով լայն շրջանակների: Ռուս հրապարակախոս Լև Օչչերովսկին գրել է. «Ռուսահայերը ցարդ այդպես ջերմորեն չեն ձգտել մոտենալ Ռուսաստանին, ցարդ չեն դրսևորել այդպիսի

⁵ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 8-9:

⁶ Готлиб В., Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, с. 42.

կրքոտ, անկասելի ձգտում՝ կապել Ռուսաստանը իրենց հայրենիքին, ինչպես այժմ»⁷:

Եվ, հիրավի, դա այդպես էր: Նման բուռն մղումը ռուսահայերի պատմական ավանդույթների նոր դրսևորումն էր, ավանդույթներ, որոնք արտահայտվել էին 1806-1812, 1828-1829, 1853-1856, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Թուրքիայի դեմ ռուսների մղած պատերազմներին հայերը մասնակցել են ոչ թե օտարի հողը զավթելու, նվաճելու, ուրիշ ժողովուրդներ ստրկացնելու, այլ սեփական հայրենիքը թուրքական գերությունից, բռնապետությունից, արյունակից եղբայրներին ֆիզիկական բնաջնջումից, ազգային-սոցիալական-կրոնական ճնշումից ազատագրելու համար: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի կողմից Թուրքիայի հանդես գալը հայերի համար ռուսական զորքերի կազմում մարտնչելու, բռնադատված Հայաստանը Թուրքիայից ազատագրելու մի պատեհ առիթ դարձավ: Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաքվում, Կովկասի հայաշատ մյուս քաղաքներում հայ հասարակայնության ականավոր ներկայացուցիչները ելույթ էին ունենում Ռուսաստանի կողմից պատերազմին հայերի մասնակցության օգտին: Օրակարգում Թուրքիան և Ռուսաստանն էին. հրապարակախոսները հիշում էին պատմությունը, զուգահեռներ անցկացնում՝ համակրանք արտահայտելով Ռուսաստանի նկատմամբ: Իրենց մտքերը և խոհերը հայտնեցին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը, ամենայն հայոց բանաստեղծ, Կովկասի հայ գրողների միության նախագահ Հովհաննես Թումանյանը, մեծանուն վիպասան, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեն, գրող, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը, բանաստեղծ Վահան Տերյանը, կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Սուրբան, հասարակական գործիչ Ա. Ջիվելեգյանը, Ռուսաստանի պետական դումայի անդամներ Մովսես Աճենյանը, Միքայել Պապաջանյանը և ուրիշներ: Մոռացվում էին

⁷ Ощеровский Л.Я., Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915, с. 19.

ցարիզմի ազգային քաղաքականության ստվերոտ և մութ կողմերը, առաջին գիծ էր մղվում արևմտահայության ազատագրության գործը: «Ամենքս կլանված էինք պատերազմով: Ամենքս դարձել էինք ռազմագետ», - գրել է Յ. Թումանյանը, - «համոզված, որ պատերազմը լինելու էր համաշխարհային վերջին տագնապը, դժբախտությունը, Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությանը լուծվելու էր Հայկական հարցը»⁸: Այդ համընդհանուր համոզվածությունը պերճախոս կերպով երևում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի՝ 1914թ. օգոստոսի 5-ի դիմումից՝ ուղղված Կովկասի փոխարքա, հեծելազորի գեներալ Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Ղաշկովին:

Վեհափառը «երջանիկ էր հավաստիացնել», որ «հայ ժողովուրդը, մոռանալով սեփական վերքերից եկած զգացումները, իր բոլոր մտքերը կենտրոնացրել է Հայրենիքի վրա, որի փառքի համար նա ոգևորությամբ արծազանքեց իր թագավորի կոչին՝ կատարել իր սուրբ պարտականությունը նորին կայսերական մեծության և Հայրենիքի առաջ»: Վեհափառը խնդրում էր, որ ռուսական կայսրական կառավարությունը խիստ պահանջներ դնի արևմտահայության բարեփոխումների իրականացման համար, հայության, որը «հավատարիմ է մնացել մեծ ռուսական պետությանը»: 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումների կատարումը վեհափառը տեսնում էր Ռուսաստանի հովանավորությամբ ու նրա ընտրությամբ նշանակված քրիստոնյա կառավարիչների գլխավորությամբ հայկական վեց վիլայեթներից մի անբաժան ու ինքնավար նահանգ կազմելու մեջ՝ քրիստոնյաների ու մահմեդականների համար հավասար ներկայացուցչությամբ⁹: Նույն օրը մեկ այլ նամակով վեհափառը փոխարքային խնդրում էր միջնորդել կառավարության առաջ՝ արձակել «դաշնակցության է գործով» 1906-

⁸ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 5, էջ 403; Կարապետյան Լ., Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Ե., 1992, էջ 99:

⁹ Ст'я Чалхушян Г., Красная книга, Ростов-на-Дону, 1919, с. 24.

1912թթ. բանտարկված դաշնակցական գործիչներին: Դիմումին կցված էին 180 գործիչների անուն ազգանունները¹⁰: Վեհափառի նամակի հիմնական մտքերը ներկայացնելով Ռուսաստանի կառավարությանը՝ Ի.Ի.Վորոնցով-Դաշկովն իր կողմից գրում էր. «Ռուսաստանի համար ծանր պայմաններում կովկասահայությունը երկրամասում ամենուր դրսևորում է հայրենասիրական մեծ տրամադրություն՝ ոգևորությամբ ընդունելով զորահավաքի հարցը և զորամասեր մտնելով»: Սակայն, նշում էր փոխարքան, «չատ ճանաչված հայեր ափսոսանք են հայտնում, որ հայերը նշանակվում են արևմտյան սահմաններում, մինչդեռ կցանկանային գնալ թշնամու դեմ»: Փոխարքան հայերի դժգոհությունն էր հայտնում նաև Արևմտյան Հայաստանում կիրառվելիք բարեփոխումները չիրականացնելու և Եվրոպայի՝ նշանակված գլխավոր տեսուչների անգործության մասին: Հայերի ցանկությունն էր բարեփոխումների կիրառումը սկսել ռուսական ծրագրի համաձայն՝ բացառապես «Ռուսաստանի հովանավորության տակ»: Ստանալով Ռուսաստանի կառավարության հավանությունը՝ Վորոնցով-Դաշկովը սեպտեմբերի 2-ին իր «քաղցր պարտականությունը համարեց» հայտնել վեհափառին նրա՝ օգոստոսի 5-ի նամակի կապակցությամբ Ռուսաստանի կառավարությունից ստացված պատասխանի մասին: «Այժմ պետական քարտուղար Գորեմիկինը ինձ տեղեկացնում է, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի Հայկական հարցում՝ այն մտադրությամբ, որ Թուրքիայի հայկական նահանգներում բարեփոխումները կմտցվեն ռուսական սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ վերահսկողությամբ»¹¹:

Միանգամայն համոզված լինելով «հայերին հուզող խնդրի նպաստավոր լուծման մեջ»՝ փոխարքան, այնուամենայնիվ, հարկ էր համարում զգուշացնել վեհափառին, որ թե՛ կովկասահայերի և թե՛ արտասահմանի հայերի գործողությունները պետք է

¹⁰ Տե՛ս Լեռ, նշվ. աշխ., էջ 113:

¹¹ Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф.Политархив, 1914г., д. 3464, л., 12-16; Чалхушян Г., նշվ. աշխ., էջ 24-25:

խստիվ համաձայնեցվեն փոխարքայի ցուցումների հետ՝ ելնելով Ռուսաստանի և Թուրքիայի միջև եղած լարված դրությունից և ընդհանուր քաղաքականության տեսանկյունից: Փոխարքան վեհափառից խոնարհաբար խնդրում էր գործի դնել նաև իր բարձր հեղինակությունը, ազդել հայության վրա (ինչպես արևմտահայերի, այնպես էլ ռուսահայության), կատարել այն հանձնարարությունները, որ ինքը՝ փոխարքան՝ ըստ ժամանակի պահանջների, կուղարկի նրանց¹²: Ոգևորված ռուսական կառավարության և նրա կովկասյան իշխանությունների խոստումներից՝ «Մշակը» 1914թ. օգոստոսի 31-ին գրում էր. «Ռուսաստանը անդամնալի կերպով կգրավի Թուրքահայաստանը և կիրագործի այն ծրագիրը, որ դեռևս 1878թ. պետք է իրագործվեր»: Թերթը նաև մեծ հույսեր էր կապում Յամաձայնության երկրների հետ, որոնք, ըստ լավատեսների, «մուրճի մի հարվածով կկործանեն Թուրքիան»¹³: Նույն «Մշակը» հոկտեմբերի 10-ին հավաստում էր, որ «մեր թուրքահայ եղբայրների դատը պաշտպանված և լուծված կլինի, եթե ներկա համաեվրոպական պատերազմի մեջ ռուսական զենքը հաղթող հանդիսանա, ուստի և մենք ամեն կերպ պետք է ապահովենք այդ հաղթանակը»:

Տոգորված արևմտահայության ազատագրման գաղափարներով՝ Արշակ Չոպանյանը հայերին կոչ էր անում մասնակցել «սրբազան պատերազմին, Յամաձայնության երկրների հաղթանակի համար»¹⁴:

Վահան Տերյանը գտնում էր, որ հայության առջև դրված է ոչ միայն ազգային— մշակութային ապագայի հարցը, այլև՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրը¹⁵:

Քիչ ավելի ուշ, հոկտեմբերի 25-ին «Մշակը» հայ ժողովրդին կոչ էր անում միահամուռ պաշտպանել Ռուսաստանին՝ նրա մեծ

¹² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց.2, գ. 709, թ. 68; Чалкунян Г., նշվ. աշխ., էջ 26:

¹³ Տե՛ս «Մշակ» Թիֆլիս, 1914, 31 օգոստոսի:

¹⁴ «Մշակ», 1914, 10 հոկտեմբերի:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 465, թ. 21-22:

և պատմական առաքելության մեջ: «Աջակցելու համար հարկավոր է մի բան՝ ընդհանուր միաբանություն, համերաշխություն, կուսակցական պառակտումներից հրաժարվել: Այսօր այլևս չպետք է լինի ո՛չ մշակական, ո՛չ դաշնակցական, ո՛չ հնչակյան, ո՛չ սոցիալ-դեմոկրատ հայկական հատվածներ, - գրում էր թերթը, - այսօր ամենքը պետք է զգան իրենց հայության զավակներ, եղբայրներ, որոնց պարտքն է մտածել, հոգալ իրենց թշվառ թուրքահայ եղբայրների ազատագրության համար»¹⁶:

Ռուսաստանի և Համաձայնության մյուս երկրների կողմից հայերի հանդես գալը, այսպիսով, դիտվում էր որպես պայքար հայկական նահանգներում բարեփոխումներ մտցնելու համար: Առաջ էր քաշվում նաև Հայաստանում կիսանկախ պետություն ստեղծելու գաղափարը՝ Ռոմանովների կայսրական հարստությունից սերված որևիցե իշխանի գլխավորությամբ: Դրա մեջ տեսնելով հարցի լուծումը՝ մոսկվաբնակ լիբերալ հասարակական-քաղաքական գործիչ Գ.Մնացականյանը 1914թ. Մոսկվայում հրատարակված «Հայկական հարցի լուծումը» գրքույկում գրում էր. «Այդպիսի պատիվ, եթե այն տրվի Հայաստանին, մարդկային պատմության մեջ թագավորող մեծագույն ընտանիքներից մեկի կողմից, ապա այդ հանգամանքը, ինքնըստինքյան, և այդ ընտանիքից Մեծ իշխանի ներկայությունը Հայաստանում, կարող են լիովին երաշխիք լինել Հայաստանի սահմաններում ապրող ժողովուրդներին անաչառ և արդարացի ղեկավարելու համար»¹⁷:

Պատերազմի նախօրյակին արևմտահայերի հարցի լուծման վերաբերյալ իրենց տեսակետներով հանդես եկան նաև հայ քաղաքական կուսակցությունները:

ՀՀ Դաշնակցությունը գտնում էր, որ Համաձայնության երկրների հաղթանակը թուրքիայի հանդեպ ազատություն կբերի արևմտահայությանը: Դեռևս պատերազմի նախօրեին Դաշնակցությունը հայտարարեց, որ ինքը այլևս հրաժարվում է հեղափոխական գործունեությունից, այն բոլոր կուսակցությունների հետ

¹⁶ «Մշակ», 1914, 25 հոկտեմբերի:

¹⁷ Мнацаканян Г.Д., Разрешение Армянского вопроса, М., 1914, с. 36.

համագործակցելուց, որոնք զբաղվում են նման գործունեությամբ, «Քանի որ նրանք, հետապնդելով ընդհանուր հեղափոխական նպատակներ, կխանգարեն դաշնակցականներին հասնելու իրենց գլխավոր նպատակին՝ թուրքահայերի ազատագրմանը ռուսական զենքի օգնությամբ»¹⁸: Արդեն 1914թ. սեպտեմբերին, Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունն արձանագրում էր. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս ոչ մի հեղափոխական գործունեություն չի դրսևորում և բացառապես զբաղված է զինվորների ջոկատների կազմակերպմամբ, ուսուցումով և Թուրքիա ուղարկելով թուրքական կառավարության դեմ պայքարի համար» Կովկասում ռուսական փոխարքայի թույլտվությամբ¹⁹:

Հնչակյանները կարծում էին, որ Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնելու դեպքում Թուրքիան կկարդա իր նահավճիռը, քանի որ այդ ժամանակ կործանվելու է ոչ միայն եվրոպական, այլև ասիական Թուրքիան²⁰: Նրանք հույս էին տածում, որ պատերազմը լուծելու է Հայկական հարցը՝ «...հայերի համար ազատության արշալույս է ծագում. նրանց դարավոր տառապանքը, վիշտն ու ցավը պիտի անհետանա շուտով, երբ ռուսական հաղթական բանակը նվաճե Հայաստանը»²¹:

Հնչակյան գործիչները գտնում էին, որ Ռուսաստանի քաղաքականությունը փոխված է, հիմա նա ուզում է պայմաններ ստեղծել հայության զարգացման համար, քանզի լավ գիտակցում է, որ այդ ժողովուրդը կնպաստի իր առաջխաղացմանը դեպի Փոքր Ասիա և այնտեղ նորանոր դիրքերի նվաճմանը: Նրանց կարծիքով, հայ ժողովուրդը պետք է մերժի հատվածական կամ մասնավոր պահանջներն ու գործունեությունը թե՛ հայրենիքում և թե՛ գաղթօջախներում: «Վանենք մեր միջից հատ-

¹⁸ Տե՛ս Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917թ.թ., Ե., 1969, էջ 168:

¹⁹ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թ.թ., Ե., 1965, էջ 182:

²⁰ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», Փրովիդենս, 1914, 3 նոյեմբերի:

²¹ Տե՛ս նույն տեղում, 17 նոյեմբերի:

վածական եսականությունը, - գրում է «Երիտասարդ Հայաստան» թերթը, - փարենք գործին մեր ամբողջ եռանդով և աշխատենք հնարավոր դարձնել մեր ուժերի համագործակցությունը, փոխադարձ անկեղծության և վստահության զգացումներով, ոչ միայն կռվի դաշտում, այլև նրանից դուրս, արտասահմանյան գաղութների մեջ: Այս է պահանջում գործի շահը, այս է պահանջում քաղաքական այն եզակի մոմենտը, որ համաշխարհային պատմության մեջ ազգերի վերածնության ու անկախության մի նոր դարագլուխ պիտի բանա»²²:

Հայկական հարցի լուծում ասելով՝ հնչակյանները հասկանում էին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միացյալ ինքնավարության հաստատում, ընդ որում, եթե պատերազմից առաջ ցանկանում էին, որ այդ ինքնավարությունը լիներ Թուրքիայի կազմում, ապա այժմ՝ Ռուսաստանի հովանավորության տակ: Նրանք գտնում էին, որ Անգլիան ու Ֆրանսիան այժմ «հակառակ չեն լինելու ինքնավար Հայաստանի կազմությանը, լինի այդ եռյակ համաձայնության, թե նրանցից մեկի հովանավորության տակ»²³:

Պատերազմի տարիներին Կահիրեում հրապարակված «Ինքնավար Հայաստան» գրքույկում Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ստեփան Սապահ-Գյուլյանը խնդիր էր դնում, որ աշխարհով մեկ ցրված հայերը պետք է համախմբվեն՝ «որքան կարելի է սերտ ու ամուր», դառնան մի ամբողջություն՝ «հաշվի առնելով դավանանքն ու կրոնը, դասային ու դասակարգային բաժանումները»²⁴: Նրանք պետք է միավորեն իրենց նյութական ու բարոյական, քաղաքական ու մշակութային միջոցները և գործեն՝ «Ամենքը մեկի համար, մեկը՝ ամենքի» սկզբունքով: Միայն այդպիսի համախմբումը կփրկի կործանման դատապարտված հայերին: Այնուհետև, ըստ հնչակյանների, հայերը պետք է ընտրեն բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներ

²² Նույն տեղում, 1914, 15 դեկտեմբերի:

²³ Նույն տեղում, 29 դեկտեմբերի:

²⁴ Սապահ-Գյուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Կահիրե, 1915, էջ 89:

րից բաղկացած համազգային ղեկավարություն, որը ներկայացնում է խաղաղության վեհաժողովին՝ նրանից պահանջի նվազագույնը Հայաստանի ու Կիլիկիայի քաղաքական ինքնավարություն՝ իր ժողովրդավարական բնույթով ու պառլամենտական վարչակարգով: Իսկ հայրենիքում հայ ժողովուրդը պետք է բարձրացնի հեղափոխություն՝ այն սկսելով «Հայաստանի հյուսիսարևելյան սահմանից, Կովկասի ռազմաճակատից»՝ Ռուսաստանի հովանավորությամբ և օգնությամբ²⁵:

Երբ թուրքիան վերջնականապես պարտվի, կործանվի ու մասնատվի, «այդ ժամանակ վեհագույն ճիգ պիտի թափել և խորունկ, տևական, ուժեղ հայկական լայնածավալ շարժում առաջ բերել և մի քանի հարմարավոր վայրեր գրավելով՝ նրանց վրա հեղափոխական կարմիր դրոշ ծածանել: Մեր 500 տարվա ճիգը այդ է պահանջում: Եթե կարողացանք այդ անել, - գրում է Սապահ-Գյուլյանը, - վստահ, անկասկած լինենք, որ ինքնավար Հայաստան, Կիլիկիա կունենանք»: Այնուհետև Սապահ-Գյուլյանը նշում է, որ անցյալում, երբ թուրքիան պարտվել է, առաջացել են փոքր պետություններ ու ինքնավար երկրներ: Այդպես կլինի նաև մեր օրերում: Թուրքիայի անկումն ու մասնատումը, նոր պետությունների ու նորանկախ երկրների ստեղծումը ձեռնտու են եղել մեծ տերություններին: Դրանք ձեռնտու կլինեն նրանց նաև այժմ: Եթե այդ պետությունները տատանվեն, հայերն իրենց հեղափոխական գործունեությամբ պետք է վերջ դնեն նրանց տատանումներին ու քաշեն իրենց կողմը: Այնպես որ, եզրափակում էր հեղինակը, «Մեր բախտը մեր ձեռքն է: Պատասխանատուն մենք ենք մնում»²⁶:

Տոգորված արևմտահայության ազատագրման գաղափարներով՝ հայ սահմանադրական-ռամկավարները հայերին կոչ էին անում պայքարել իթթիհատականների բարբարոսությունների դեմ, արևմտահայությանը փրկել ոչնչացումից: Կուսակցության գլխավոր օրգան «Վան-Տոսպ» թերթը 1915թ. հուլիսին, նկարա-

²⁵ Նույն տեղում, էջ 95:

²⁶ Նույն տեղում, էջ 95-96:

գրելով հայկական կոտորածները Արևմտյան Հայաստանում, գրում էր. «Վրեժ: Այդ է միակ բառը, որ պետք է ոգևորե կոտորածեն ազատ մնացող յուրաքանչյուր հայու սիրտը: Վրեժ՝ մեր մորթոտվող եղբայրներուն ու քույրերուն, մեր ավերակներուն, մեր արյունի մեջ խեղդված յուրաքանչյուրին համար: Վրեժ այն վայրենի ոհմակներու հանդեպ, որ այս պահուս դիվային հրճվանքով կլողան հոսող հայ արյան մեջ...»: Ուրախությամբ նշելով, որ պատերազմում ռուսները կջախջախեն թշնամուն և առաջ կշարժվեն՝ «Վան-Տոսպը» ցանկություն էր հայտնում, որ նրանք ոչ թե կտրեն թուրք օձի պոչը, այլ ճգմեն գլուխը. «Ամեն մի հայ, կին թե տղամարդ, հարուստ թե աղքատ իր նվիրական պարտականությունը պիտի համարի մասնակցել ներկա ազատագրական և վրեժխնդրական արշավանքին՝ իր ընդունակություններուն, իր տրամադրելի միջոցներուն չափով»: Նրանք, ովքեր չեն կարող զինվոր լինել, պետք է օգնեն ընդհանուր գործին նյութական միջոցներով: Պետք է ապացուցել «մեր ռուս և հայ եղբայրներուն՝ թե ոչինչ չենք խնայեր մերովսանն վերցնելու համար իրանց կրած գործին ծանրությունը»²⁷:

IV Պետական դումայի պատգամավոր, կադետ Մ. Պապաջանյանը եռանդուն կերպով միջնորդում էր ռուսական իշխանությունների առաջ, որ նրանք բանտերից ու աքսորից ազատեն հայ զանազան կուսակցությունների ներկայացուցիչներին, հատկապես դաշնակցությանը պատկանող անձանց և տարագրվածներին թույլատրեն արտասահմանից վերադառնալ, որպեսզի օգնեն ընդհանուր գործին, այսինքն՝ ծառայեն պատերազմում Ռուսաստանի նպատակների իրագործմանը: Հայ կադետները մեկնում էին Ռուսաստանի քաղաքները, հավաքագրում կամավորներ, կազմակերպում հանգանակություններ և կատարում ռուսական իշխանությունների հանձնարարությունները: Հայկական պարբերականներում նրանք հանդես էին գալիս բազմաթիվ հողվածներով և նշում, որ ներկա պատերազմում Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան պարտվելու են, իսկ նրանց դաշնակից

²⁷ «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1915, 3 հուլիսի:

Թուրքիան հանձնվելու է հաղթողների ողորմածությամբ: Համա-
ծայնության երկրները այն բաժանելու են ազդեցության երեք
շրջանների. Անգլիան գերիշխելու է Արաբիայում ու Միջագետ-
քում, Ֆրանսիան՝ Սիրիայում, իսկ Ռուսաստանը՝ Հայաստանում
և նրան շնորհելու է ինքնավարություն: Կադետները որոշել էին
նաև ինքնավար Հայաստանի սահմանները: Ըստ նրանց, այն
պետք է ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի, Խարբերդի,
Դիարբեքի, Տրապիզոնի և Ադանայի վիլայեթները: Այս վիլա-
յեթների բնակչության մեծ մասը հայեր էին, ընդ որում, Վանի,
Բիթլիսի և Ադանայի վիլայեթներում նրանք կազմում էին բացար-
ձակ, իսկ մնացած վիլայեթներում՝ հարաբերական մեծամաս-
նություն:

Կադետները կարծում էին, որ այդ վիլայեթներից պետք է
կտրել դրանցից մի քանիսի ծայրագավառները, որտեղ հայերը
սակավաթիվ են, իսկ մյուս ժողովուրդները՝ ստվարաթիվ: «Այդ-
պես են Տրապիզոնի վիլայեթի արևմտյան մասը... Սվազի վիլա-
յեթի «արևմտյան և հյուսիս-արևմտյան մասերը, Բիթլիսի ու
Դիարբեքի վիլայեթների՝ Միջագետքին սահմանակից հարա-
վային մասերը»²⁸: Դրա հետևանքով ազգաբնակչությունը վերո-
հիշյալ շրջաններում 5.215.400-ից կպակասի շուրջ կես միլիո-
նով, բայց ոչ թե հայերի, այլ հիմնականում այլ ժողովուրդների
հաշվին:

Կադետները հույս էին հայտնում, որ երբ Արևմտյան Հայաս-
տանը ստանա ինքնավարություն, նրա տարագիր բոլոր զավակ-
ները հետ կվերադառնան, կշենացնեն իրենց օջախները և ազ-
գության միասնությունը կդնեն ավելի ամուր հիմքերի վրա:
Նրանք համոզված էին, որ Հայաստանը կարող է ինքնավա-
րություն ստանալ միայն Ռուսաստանի օգնությամբ և այդ պա-
րագայում հնարավորություն կունենա «մասնակից լինելու քա-
ղաքակրթության բարիքներին, սկսելու իր առանձնակի, ազգա-
յին հասարակական կյանքը»²⁹:

²⁸ «Արարատ», Էջմիածին, 1914, դեկտեմբեր, էջ 1089-1090:

²⁹ Նույն տեղում:

Պատերազմից առաջ արևմտահայերի հարցի լուծման վերաբերյալ ուրույն տեսակետներով հանդես եկավ նաև Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը՝ «սպեցիֆիկներ» հորջորջումով: Նրանց ղեկավարները (Դ.Անանուհ, Բ.Իշխանյան) գտնում էին, որ արևմտահայության հարցը կարող է լուծել միայն նրա հոգևոր համախմբումը: Դրա համար,– ըստ սպեցիֆիկների,– պետք էր վարել ազգային այնպիսի քաղաքականություն, որը «չպիտի մերժե համայնակեցության անհրաժեշտությունը թուրքիայում (ինչպես այդ չի մերժվում Ռուսաստանում): «Եթե թուրքիան անտանելի է իր քաղաքական կյանքով, պիտի նպաստել նրա բարենորոգմանը, որքան էլ դա ծանր գործ լինի: Կարող է լինել թուրքիայի բաժանման հարց, սակայն այստեղ հայերին չեն հարցնելու, և նրանք պիտի հպատակվեն նրան, ում բաժին են ընկել: Թույլը և անզորը այլ կերպ չի կարող վարվել»³⁰ - գրում է Դ. Անանուհը «Հայության հավաքումը» հոդվածում:

Հավատարիմ իր «կուլտուր-ազգային ինքնավարության» գաղափարին՝ հայ սպեցիֆիկների ղեկավար Անանուհը եզրափակում էր, որ բոլոր դեպքերում էլ արևմտահայերը «պիտի ընդգրկեն ազգային-կուլտուրական ինքնավարության պահանջը, և ճանապարհը այդ պահանջի համար հարթված է, դա ազգային սահմանադրության գոյությունն է»: Հայոց հարցի լուծումը «պետք է փնտրել թուրքիայում և ազգային-կուլտուրական ինքնուրույնության միջոցով»³¹:

Դ.Անանուհի այդ տեսակետն էր պաշտպանում նաև նրա կուսակից Բ.Իշխանյանը: Նա գտնում էր, որ Հայկական հարցի լուծման համար առաջացել է մի բարենպաստ պայման: Դա այն է, որ, եթե առաջ Անգլիան Ռուսաստանի թշնամին էր, ապա այժմ՝ նրա դաշնակիցը: Նրանք միասին պատերազմում են թուրքիայի դեմ: Երբ Գերմանիան պարտվի, թուրքիան կդառնա դաշնակիցների ավարը: Բայց Հայկական հարցի լուծման համար կա մի

³⁰ «Մշակ», Թիֆլիս, 1914, 19 հոկտեմբերի:

³¹ Նույն տեղում:

լուրջ դժվարություն: Ղա հայության ցրվածությունն է թուրքիայում մեկ: Մի տեղում հայերն են կազմում մեծամասնություն (Վանում), մի այլ տեղում՝ թուրքերը (էրզրումում): Նման հանգամանքներում՝ Հայկական հարցը արմատապես չի լուծվի, եթե անգամ ստեղծվի վեց վիլայեթների ու Կիլիկիայի միասնական ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո, քանի որ անուշադրության կմատնվեն Օսմանյան կայսրության կենտրոնական ու արևմտյան շրջաններում բնակվող հայերը³²:

Բ. Իշխանյանի կարծիքով, Հայկական հարցի լուծման համար թուրքիայի հայաբնակ վիլայեթները կամ նրանց մի մասը (ինչպես կորոշեն Համաձայնության երկրների հաղթող տերությունները) նախ պետք է միացնել Կովկասին՝ «մտցնելով այնտեղ տեղագրական և ցեղական ազգային առանձնահատկություններին համապատասխան լայն ինքնավարական-վարչական ձևեր: Երկրորդ՝ Փոքր Ասիայում և եվրոպական թուրքիայում մնացած հայկական հատվածի համար իրականացնել իրավաքաղաքացիական արմատական բարենորոգումներ և ազգային-կուլտուրական ինքնավարություն»: Հայաբնակ շրջանների միացումը Կովկասին, ըստ Բ.Իշխանյանի, շատ բաներով լավ կլինի նրանց բնակիչների և, առաջին հերթին, հայերի համար, քանի որ Ռուսաստանը, գտնվելով անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա, կնպաստի նրանց սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը, իսկ թուրքիայում մնացած հայերի համար անհրաժեշտ է մտցնել բարենորոգումներ և նրանց տալ ազատ զարգացման իրավունքներ³³:

Հայ սպեցիֆիկները թե՛ պատերազմից առաջ, թե՛ պատերազմի տարիներին շարունակում էին պաշտպանել Հայկական հարցի լուծման՝ «կուլտուր-ազգային ինքնավարության» իրենց գաղափարը:

³² Տե՛ս նույն տեղում, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 461:

³³ <<Մշակ>>, 1914, 11 դեկտեմբերի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այլ էր միայն բոլշևիկների տեսակետը: Այն ժամանակ, երբ բոլոր կուսակցությունները հանդես եկան պահը օգտագործելու՝ արևմտահայության հարցը լուծելու օգտին և կանգնեցին Ռուսաստանի կառավարության կողմը, հայ բոլշևիկները կոչ արեցին իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի, հասնել պատերազմող բոլոր երկրների կառավարությունների պարտությանը: Անդրկովկասում բոլշևիկյան կուսակցության լեհինյան դրույթները կենսագործելու նպատակով, 1915թ. հոկտեմբերի 4-ին Բաքվում, Ս.Շահումյանի գլխավորությամբ, հրավիրվեց կուսակցական ընդատակյա խորհրդաժողով, որին մասնակցեցին Բաքվի, Թիֆլիսի և Քութայիսի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհրդաժողովը խստորեն դատապարտեց Անդրկովկասի իշխող դասակարգերի և կուսակցությունների դիրքորոշումը պատերազմի նկատմամբ: Բոլշևիկներին հանձնարարեց մերկացնել հայ բուրժուազիայի ու դաշնակցության ազգայնական հանցավոր քաղաքականությունը, աշխատավորական զանգվածներին կոչ արեց չենթարկվել ազգայնական կուսակցությունների սադրիչ հայտարարություններին և կեղծ հայրեասիրական կոչերին: Խորհրդաժողովն ընտրեց ՌՄԴԿ կովկասյան բյուրո, որի կազմի մեջ մտան Ս.Շահումյանը, Ֆ.Մախարաձեն, Ի.Ֆիալետովը, Ն.Ալաջալովան, Ս.Քավթարաձեն և ուրիշներ³⁴: Նրանց անմիջական ղեկավարությամբ Անդրկովկասի բոլշևիկները մեծ ջանքեր գործադրեցին Բաքվի խորհրդաժողովի որոշումները կենսագործելու և ազգաբնակչության մեջ քաղաքական աշխատանքներն ակտիվացնելու ուղղությամբ: Այդ գործում ակտիվ դեր խաղաց հատկապես 1915թ. վերջին Թիֆլիսում լույս տեսնող «Պայքար» շաբաթաթերթը, որը, անհաշտ կռիվ մղելով այլ գաղափարախոսությունների դեմ, փորձում էր ժողովրդին համախմբել բոլշևիկյան կուսակցության գաղափարների շուրջ:

³⁴ Տե՛ս Շահումյան Ս., Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1978, հ. 3, էջ 27-28:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Հայերը մեծ ոգևորությամբ և կազմակերպվածությամբ մասնակցում էին դեռևս պատերազմի նախօրյակին, 1914թ. հուլիսի 13-ին Կովկասում սկսված զորահավաքին, ռուսական կառավարության թույլատրած կանավորական շարժման գործընթացին:

Ռուսաստանի յուրաքանչյուր 100 հայից 13-ը զորակոչվեց բանակ¹: Պատերազմի տարիներին Ռուսական կայսրության մեջ բնակվող 2 միլիոն 54 հազար հայերը ռուսական բանակին տվեցին ավելի քան 250 հազար զինվոր²:

Պաշտոնական տվյալներով՝ 1914թ. նոյեմբերից մինչև 1916թ. դեկտեմբերի 30-ը միայն Թիֆլիսի տեղական բրիգադով անցել էր զինվորական ծառայության համար պիտանի 121991 հայ: Վրացիները հայերից 878 մարդով պակաս էին՝ 121113, թաթարները՝ 80 անգամ պակաս, ընդամենը՝ 1341 հոգի: Նկատենք, որ զորակոչված 177787 վրացիներից ազատվել է 56674-ը՝ մոտ մեկ երրորդը, 147344 հայերից՝ 25353-ը, մոտ մեկ վեցերորդ մասը: Միայն Գանձակից զորակոչվել է 31896 հայ, Բաքվից՝ 11797, Թիֆլիսից՝ 23537³:

Շարք վերադարձան պահեստում գտնվող շատ գեներալներ և սպաներ, այդ թվում՝ գեներալ-մայորներ Թովմաս Նազարբեկյանը, Միքայել Քիչմիչևը, Վաղարշակ Տեր-Հակոպով-Տեր-Մարկոսյանը և ուրիշներ: Սպաների թիվը հասավ 1800-ի:

¹ Տե՛ս «Հայկական հարց», հանրագիտարան, Ե., 1996, էջ 41:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 547:

³ Տե՛ս Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվականի մայիս, Ե., 1998, էջ 15:

Ձինվորակոչված 250 հազար հայերի թիվը կազմում էր Ռուսական կայսրության տարածքում բնակվող բոլոր տարիքի հայերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների 12.2 տոկոսը: Փաստորեն, գենքի կոչվեցին ծառայության պիտանի գրեթե բոլոր տղամարդիկ:

Հայ բարձրաստիճան սպայությանը վստահված էր պատասխանատու բնագավառների կառավարումը: Գեներալ-մայոր Լևոն Ֆադեյի Տիգրանովը Պետրոգրադի ռազմական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալն էր /1917թ./, գեներալ-մայոր Յակով /Յակոբ/ Գերասիմի Բագրատունին՝ Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի պետը /1917թ./, գեներալ-լեյտենանտ Լևոն Ավետիքի Պոզոկը /Պոզոյան/՝ Թուրքեստանյան ռազմական օկրուգի հրետանու պետը /1916թ./, հրետանու գեներալ Անդրեյ Ադամի Աթաբեկովը՝ Մոսկովյան ռազմական օկրուգի հրետանու պետը /1913-1916թթ./, գեներալ-մայոր Իվան Վասիլի Ախվերդովը /Յախվերդյան/՝ Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի շտաբի պետը /1916-1917թթ./, գեներալ-մայոր Վլադիմիր Պետրոսի Լազարևը /Լազարյան/՝ 7-րդ կորպուսի շտաբի պետը /1916թ./, գեներալ-մայոր Ալեքսանդր Իվանի Լազարևը (Լազարյան)՝ գեներալ-հանձնակատար /1914թ./, գեներալ-լեյտենանտ Ստեփան Գերասիմի Քալանթարովը՝ Վիտեբսկի պարետը և կայազորի պետը, ապա՝ Պետրոգրադի պարետը /1914-1918թթ./, գեներալ-մայոր Գավրիիլ /Գաբրիել/ Կորգանովը /Ղորղանյան/՝ Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալը /1917-1918թթ./, գեներալ-լեյտենանտ Արտեմի Սոլոմոնի Վարտանովը՝ 7-րդ բանակի հրետանու տեսուչը /1916թ./, գեներալ-մայոր Վասիլի Միխայելի Թամաշևը /Թամամշյան/՝ հեծելազորային բանակի հրամանատարին կից գեներալ-հանձնակատարը /1916թ./, գեներալ-մայոր Վաղարշակ Տեր-Ակոպով-Տեր-Մարկոսյանցը՝ Կովկասյան բանակի ճարտարագործական վարչության պետը /1917թ./: Հայազգի զինվորականներից շատերը եղել են կորպուսի, դիվիզիայի, զորաջոկատի, բրիգադի, գնդի հրամա-

նատարներ: Ինֆանտերիայի գեներալ⁴ Օգանովսկին Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր /1915-1917թթ./, հեծելազորի գեներալ Գեորգի Ալեքսանդրի Թումանովը՝ 7-րդ հեծելազորային կորպուսի հրամանատարը /1916թ./, գեներալ-մայոր Ֆոնա /Թովմաս/ Իվանի Նազարբեկովը՝ Երևանյան զորաջոկատի և նահանգի զորքերի պետը /1915-1917թթ./, գեներալ-մայոր Մովսես Բաբայի Սիլիկովը՝ Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի հրամանատարը, ապա՝ Վանի զորաջոկատի պետը /1915-1916թթ./, գեներալ-լեյտենանտ, իշխան Կոստանտին Ալեքսանդրի Թումանովը /Թումանյան/՝ Անդրամուրյան 1-ին հեծյալ բրիգադի հրամանատարը /1916թ./, գեներալ-մայոր Իսայի Իսայու Ալիմովը /Յովակիմյանը/՝ Անդրբայկալյան 1-ին հրետանային բրիգադի հրամանատարը /1916թ./, գեներալ-մայոր Գեորգի Ավետիքի Պոզոնը /Պոզոյան/՝ հրետանային 46-րդ բրիգադի հրամանատարը /1916թ./, գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Ռուբեն Ավետիքի Պոզոնը /Պոզոյան/՝ հրետանային 6-րդ բրիգադի հրամանատարը /1916թ./, գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանը՝ հայկական Հավաքական ջոկատի հրամանատարը (1917 թ.), գեներալ-մայոր Ալեքսանդր Գաջաևը /Հաջոյան/՝ 23-րդ կովկասյան հրաձգային գնդի հրամանատարը /1917թ./, գեներալ-մայոր Պավել Պետրոսի Բեժանբեկը՝ 22-րդ կովկասյան հրաձգային գնդի հրամանատարը: Տարբեր զորատեսակներում և ռազմաճակատներում բարձր դիրք ունեին նաև գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Ռոմանի Ալախվերդովը /Մելիք-Ալախվերդյան/, գեներալ-մայորներ Սիքայել Արեշևը, Պավել Սենյոնի Սուլթան-Շահը, Նիկոլայ Մեժլունի Մելիք-Շահնազարովը, Պավել Դմիտրիի Մելիք-Շահնազարովը, Արսենի Սերգեյի Դուլուխանովը, Դավիդ Գրիգորիի Բեբուտովը /Բեբուտյան/, գնդապետներ Կոստանտին Բեգ-

⁴ Ինֆանտերիայի /հետևազորի/ գեներալ /հրետանու, հեծելազորի/ այսպես կոչված լրիվ գեներալ, 1796-1917թթ. Ռուսաստանի զինված ուժերի բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչում, որը հաջորդում էր գեներալ-լեյտենանտին:

լարի Դոլուխանովը, Նիկոլայ Արտեմի Կոստանովը և շատ ուրիշ-ներ⁵:

Արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա կատարված մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ 1914-1918թթ. Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցել են 31 հայազգի գեներալներ, որոնցից մեկը՝ ինֆանտերիայի գեներալ /Օգանովսկի/, մեկը՝ հեծելազորի գեներալ /Գ.Ա.Թումանով/, մեկը՝ հրետանու գեներալ /Ա.Ա.Աթաբեկով/, հինգը՝ գեներալ-լեյտենանտ /Լ.Ա.Պոզոև, իշխան Կ.Ա.Թումանով, Ա.Ս.Վարտանով, Ս.Գ.Քալանթարով, Ա.Ռ.Ալախվերդով/, քսաներեքը՝ գեներալ-մայոր /Լ.Ֆ.Տիգրանով, Յ.Գ.Բագրատունի, Գ.Գ.Կորգանով, Ի.Ի.Ակիմով, Վ.Տեր-Ակոպով-Տեր-Սարկոսյանց, Գ.Ա.Պոզոև, Ռ.Ա.Պոզոև, Ի.Ս. Բաղդամով, Ի.Վ.Ախվերդով, Մ.Բ.Սիլիկով, Վ.Ս.Թամաշև, Վ.Պ.Լազարև, Ֆ.Ի.Նազարբեկով, Մ.Արեշև, Ա.Ի. Լազարև, Ն.Ս.Մելիք-Շահնազարով, Պ.Պ. Բեժանբեկ, Պ.Գ.Մելիք-Շահնազարով, Պ.Ս.Սուլթան-Շահ, Դ.Գ.Բերուտով, Ա.Ս.Դոլուխանով, Ա.Գաջան, Ա.Օգանյան/:

Եվրոպական և կովկասյան ռազմաճակատներում ռուսական բանակի կազմում իր խոսքն ասաց արդեն ավանդական՝ հայկական սպայական գերդաստանների նոր սերունդը: Ռազմաճակատում էին Աբամելիքովներից՝ 5-ը, Ախշարունովներից՝ 5-ը, Արղութինսկի-Դոլգորուկովներից՝ 10-ը, Մելիքովներից՝ 6-ը, Յախվերդովներից՝ 3-ը, Լազարևներից՝ 4-ը, Թումանովներից՝ 5-ը, Ղորղանյաններից՝ 14-ը, Տիգրանովներից՝ 1-ը:

Պատերազմը վերածնեց ռուս-թուրքական պատերազմներից հայտնի՝ Աբեյյանների, Աճեմյանների, Աֆշարյանների, Դոլուխանյանների, Յովսեփյանների, Քալանթարյանների, Փիրում-

⁵ Российский государственный военно-исторический архив /այսուհետև՝ РГВИА/, ф.409, оп. 1, д. 16833, л. 1-3, Послужной список Генерального штаба генерал-майора Левона Фадеевича Тигранова /նույն տեղում, գ. 50942, р. 1-11, գ. 46528, р. 1/; **Аветисян Г.**, Генералы-армяне в Российской империи, Е., 2007; **Չարապետյան Ս.**, Հայազգի զինվորականները ռուսական բանակում /XIX դարի վերջ – XX դարի սկիզբ/, Ե., 2008; **Карапетян М.**, Генерал-лейтенант Ованес Ахвердян, Е., 2003.

յանների (Բեկ-Փիրունյանների), Սահակյանների, Սաղինյանների, Սիլիկյանների, Հարությունովների, Մանուչարյանների զինվորական գերդաստաններին, որոնց նոր սերունդը հիմնականում Կովկասյան ճակատում էր⁶:

Եվրոպական ճակատում առաջին իսկ մարտերում աչքի ընկած հայ սպաներից էին 81-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ Լևոն Ֆադեյի Տիգրանովը, գեներալներ Անդրեյ Ադամի Աթաբեկովը, Գեորգի Ալեքսանդրի Թունանովը: Վերջինս 13-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատարի պաշտոնից առաջ քաշվեց և նշանակվեց 7-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար, ստացավ հեծելազորի գեներալի աստիճան: Աթաբեկովը նշանակվեց Մոսկովյան ռազմական օկրուգի հրետանու պետ:

Հյուսիսային և հարավարևմտյան ճակատներում 1914թ. սեպտեմբերից մինչև 1915թ. մայիս Վիսլա, Պիլիցա, Ռադոմկե գետերի և Իվանգորոդ, Լոձ, Դրոգոբիչ, Պերեմիշլ, Ֆրեդրոպոլ, Բրեստ քաղաքների շրջանում մղված թեժ մարտերում ցուցաբերած անձնական սխրագործության համար Լևոն Տիգրանովը պարգևատրվեց Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի սրով և ժապավենով, Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի՝ սրով և ժապավենով շքանշաններով, թանկարժեք զենքով և շնորհակալագրերով:

1914թ. օգոստոսից մինչև 1917թ. ապրիլ գտնվելով մարտերի մեջ, վիրավորվելով, նորից շարք մտնելով՝ Լ. Տիգրանովը հերթականությամբ ստանձնեց 81-րդ, ապա 106-րդ հետևակային դիվիզիաների շտաբի պետի, 321-րդ Օսկի հետևակային գնդի հրամանատարի, 42-րդ բանակային կորպուսի շտաբի արշավանքային-տնտեսական վարչության պետի պաշտոնները, պարգևատրվեց նոր շքանշաններով: 1916թ. դեկտեմբերի 6-ին նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում: 1917թ. մարտի 28-ին քաջարի հայորդին առաջ քաշվեց ծառայության Պետրոգրադի ռազմական օկրուգում, նշանակվեց Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի հերթապահ գեներալ: 1917թ. սեպտեմբերի 25-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հրամանով նշանակ-

⁶ Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 16:

վեց Պետրոգրադի ռազմական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ⁷:

Եվրոպական ճակատում առաջին իսկ մարտերում աչքի ընկած հայ սպաներից էին նաև թուրքեստանյան առաջին կորպուսի շտաբի՝ հատուկ հանձնարարությունների գծով սպա, գնդապետ Հակոբ Գերասիմի Բագրատունին և թուրքեստանյան առաջին հրետանային բանակային կորպուսի տեսուչ, գեներալ-մայոր Լևոն Ավետիքի Պոզոևը: Վերջինս հրետանային կորպուսի տեսուչի պաշտոնից առաջ քաշվեց և նշանակվեց թուրքեստանյան ռազմական օկրուգի հրետանու պետ:

Եվրոպական ճակատում սեպտեմբերի 18-20-ին և 24-28-ին մղված թեժ մարտերում ցուցաբերած անձնական սխրագործության համար Հակոբ Բագրատունին պարգևատրվեց Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի և Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով: Նոյեմբերի 21-ին Պրասնիչա բնակավայրի համար մղված մարտերում նոր սխրանքի համար արժանացավ Գեորգիյան խաչի: Նրա սխրանքի մասին զեկուցվեց Նիկոլայ II-ին:

1915թ. հունվարից մինչև 1917թ. ապրիլը գտնվելով մարտերի մեջ, վիրավորվելով, նորից շարք մտնելով, հերթականությանը ստանձնեց 76-րդ հետևակային դիվիզիայի, 2-րդ թուրքեստանյան հետևակային, ապա հետևակային-հրետանային բրիգադի շտաբի պետի, թուրքեստանյան 8-րդ գնդի հրամանատարի պաշտոնները, պարգևատրվեց նոր շքանշաններով: 1917թ. մայիսին, որպես արևմտյան ճակատի պատվիրակ, մասնակցեց սպայության համառուսական համագումարին, առաջ քաշվեց աշխատանքի զինվորական նախարարությունում, ապա նշանակվեց Պետրոգրադի զինվորական օկրուգի շտաբի պետ, ստացավ գեներալ-մայորի աստիճան⁸:

⁷ Տե՛ս РГВИА, ф. 409, оп. 1, д. 168633, л. 1-8; Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 33-38, 79-81:

⁸ Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 17:

Հայազգի զինվորականները ակտիվորեն մասնակցել են պատերազմի բոլոր շրջանների գրեթե բոլոր ռազմական գործողություններին:

Եվրոպական ճակատում 1914թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին ծավալված Գալիցիա և Լյուբլին – Խոլմյան օպերացիաների ժամանակ աչքի ընկած հայ սպաներից էին Ռուսական 14-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչ, գեներալ-լեյտենանտ Արտեմի Սոլոմոնի Վարտանովը, 19-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցի հրամանատար, փոխգնդապետ Կոստանտին Բեգլարի Դոլուխանովը, գրենադերական հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիայի հրամանատար, գնդապետ /հետագայում՝ գեներալ-մայոր/ Գեորգի Ավետիքի Պոզոկը:

Վարչական-Իվանգորոդյան, Պերեմիշլյան, Լոծի ռազմական օպերացիաների ժամանակ իրենց քաջությամբ և սխրագործություններով աչքի ընկած հայազգի զինվորականներից էին գեներալ-լեյտենանտ Արտեմի Վարտանովը, հրետանավոր, կապիտան Գեորգի Վասիլի Բաբաջանովը, պորուչիկ Դենիս Գեորգիի Պոզոկը: Նոյեմբերյան և դեկտեմբերյան մարտերի համար Վարտանովը պարգևատրեց Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով շքանշանով և Սբ. Աննայի 1-ին աստիճանի շքանշաններով՝ սրով⁹:

Եվրոպական ճակատում ավստրո-գերմանական զորքերի դեմ 1915-1916թթ. ծավալված ռազմական գործողություններին ակտիվ մասնակցություն ունեցան փոխգնդապետներ Կոստանտին Դոլուխանովը, Քրիստափոր Գերասիմի Արարատովը /հետագայում՝ գեներալ-մայոր/, Թուրքեստանյան ռազմական օկրուգի հրետանու պետ, գեներալ-լեյտենանտ Լևոն Ավետիքի Պոզոկը, գեներալ-լեյտենանտ Արտեմի Վարտանովը, 46-րդ հրետանային բրիգադի հրամանատար Գեորգի Պոզոկը, 78-րդ հրետանային բրիգադի շտաբս-կապիտան Նիկոլայ Սողոմոնի

⁹ Տե՛ս Փահլևանյան Կ., Ռուսական կայսրության զինված ուժերի հայ հրետանավորները / XIX դարի վերջ– XX դարի սկիզբ/, Ե., 2013, էջ 97-107:

Աբամելիքովը, 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի պրապորշչիկ Նիկոլայ Օհանովը, 65-րդ հրետանային բրիգադի պարուչիկ Դենիս Գեորգիի Պոզոկը, փոխգնդապետ Կոստանտին Գերասիմի Յուզբաշևը /Յուզբաշյան/, 52-րդ հրետանային բրիգադի կապիտան Բոգդասար Բոգդասարովը, 19-րդ հրետորիգադի կապիտան Գեորգի Բաբաջանովը, Սիբիրյան 1-ին ծանր հրետանային բրիգադի պարուչիկ Գալուստ Արտեմի Մելիք-Յարությունյանը, պրապորշչիկ Արշակ Յովհաննեսի Քոսյանը և շատ ուրիշներ:

Եվրոպական ճակատում 1915թ. սկզբին մղված մարտերում արդյունավետ գործողություններ ձեռնարկելու համար Կոստանտին Դոլուխանովը ստացավ գնդապետի աստիճան, իսկ ժասլիկ-Վալիգրոդ հատվածում բռնկված մարտերում ցուցաբերած քաջության համար պարգևատրվեց Աբ. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Մարտերում ցուցաբերած անձնական սխրագործության համար պրապորշչիկ Նիկոլայ Օհանովը պարգևատրվեց Աբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով՝ «Արիության համար» մակագրությամբ, պորուչիկ Դենիս Պոզոկը՝ Աբ. Ստանիսլավի 3-րդ և Աբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշաններով: 1916թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 19-ը Մենարժե, Մալի, Պլոցկ և Վախ բնակավայրերի մոտ մղված թեժ մարտերում ցուցաբերած սխրագործությունների համար Քրիստափոր Արարատովը պարգևատրվեց Աբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով՝ սրով և ժապավենով¹⁰: Խոլմյան ու Գրոդնենսկի նահանգների մարտերի և Նարոչյան օպերացիայի ժամանակ իրենց քաջության և սխրագործություններով աչքի ընկած հայ սպաներից էին նաև գեներալ-մայոր Գեորգի Պոզոկը, պրապորշչիկ Արշակ Քոսյանը: Վերջինս Նարոչյան օպերացիային ակտիվորեն մասնակցելու համար պարգևատրվեց Աբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանով: Գեորգի Պոզոկը 1916թ. Կարչևա գյուղի տարածքում տեղի ունեցած թեժ մարտերում ցուցաբերած քաջության և զորավարական տաղանդի դրսևորման համար պարգևա-

¹⁰ Նույն տեղում, էջ 110-113:

տրվեց սրով և ժապավենով՝ որպես վաղօրոք ստացած Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի հավելում¹¹:

Կովկասյան ճակատում պատերազմը սկսվեց 1914թ. հոկտեմբերի 31-ին: Ռուսական զորքերի առաջին օրերի գործողությունների մասին նույնների 2-ին և 3-ին զեկուցվեց Նիկոլայ II-ին: Այս ճակատում առաջին իսկ մարտերում աչքի ընկած հայ սպաներից էր Երևանյան հեծյալ ջոկատի շտաբի պետ Գավրիիլ Կորգանովը /Ղորղանյան/, որը 1914թ. դեկտեմբերի 6-ին նշանակվեց 39-րդ դիվիզիայի շտաբի պետ: Այդ դիվիզիայի 154-րդ գնդի զինվորները դեկտեմբերի 22-ին Սարիղամիշի ռազմական օպերացիայի հենց սկզբում Ղզըլ-Քիլիսայի շրջանում գերի վերցրին թուրքական 9-րդ կորպուսի հրամանատարին, 106 սպա և շատ ռազմավար: Նկատենք, որ այդ գնդի սպաների մեկ երրորդից ավելին հայեր էին: Դեկտեմբերյան մարտերի համար Գավրիիլ Ղորղանյանը պարգևատրվեց Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով և Սբ. Աննայի շքանշանով՝ սրով և ժապավենով: Նա նշանակվեց Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ¹²:

Հայտնի են Սարիղամիշի, Ալաշկերտի, Տրապիզոնի, Համադանի, Դիլմանի, Վանի և այլ օպերացիաների ու ճակատամարտերի գործուն մասնակից շատ հայ սպաների անուններ: Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանն իր հաղթանակով աչքի ընկավ Դիլմանի ճակատամարտում, այստեղ սխրանքներ գործեց նաև Անդրամիլը: Նազարբեկյանը նշանակվեց Մուշ-Քիթլիսյան, ապա՝ Կարանուջյան զորաջոկատի պետ: Մովսես Սիլիկյանը 8-րդ գնդի հրամանատարն էր, 1915-1916 թթ.՝ Վանի ռուսական զորաջոկատի պետը¹³: Իվան /Յովհաննես/ Հախվերդյանը Տրապիզոնում տեղակայված 127-րդ հետևակային դիվիզիայի շտաբի

¹¹ Նույն տեղում, էջ 136:

¹² Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 18:

¹³ Տե՛ս Аветисян Г., Генералы – армяне в Российской империи, Е., 2007, с. 142-143, 218.

պետն էր, գեներալ-մայորի աստիճան ստանալուց հետո՝ Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի շտաբի պետը¹⁴: Գնդապետ Պավել Պետրոսի Բեժանբեկը Կովկասյան 22-րդ հրաձգային գնդի հրամանատարն էր, գնդապետ Յուզբաշևը /Յուզբաշյան/՝ 201-րդ Նոտիյան հետևակային գնդի հրամանատարի տեղակալը, գնդապետ Լ.Չարուխչևը /Չարուխչյան/՝ 17-րդ թուրքստանյան հրաձգային գնդի հրամանատարի տեղակալը¹⁵: Գնդապետ Ռուբեն Պոզոկը իր սխրագործություններով աչքի ընկավ Սարիղամիշի օպերացիայի ժամանակ, պարգևատրվեց Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրով, առաջ քաշվեց՝ նշանակվելով 6-րդ հրետանային բրիգադի հրամանատար¹⁶: Կովկասյան ճակատում 1916-1918թթ. ծավալված ռազմական գործողություններին ակտիվ մասնակցություն ունեցան Կովկասյան 1-ին առանձնացված հրետանային դիվիզիոնի կապիտան /հետագայում՝ փոխգնդապետ/ Իոսիֆ Ֆադեյի Տիգրանովը, 44-րդ հրետանային բրիգադի կապիտան Վալենտին Մխիթարի Դեմիրտաշևը, 21-րդ հրետանային բրիգադի փոխգնդապետ Քրիստափոր Գերասիմի Արարատովը, 19-րդ հրետանային բրիգադի գնդապետ Կոստանտին Բեզլարի Դոլուխանովը¹⁷, կազակային Պարտիզանական զորաջոկատի Կուբանյան հարյուրյակի շարքայիններ Լևոն Կասպարովը, Գրիգոր Ավանեսյանցը, Խաչատուր Քալանեյանցը, Իվան Առաքելովը: Վերջիններս Կովկասյան ռուսական բանակի կազակային զորամասերի հայ կամավորներից առաջինն էին, որ արժանացան Սբ. Գեորգիի շքանշանին՝ «Թուրքերի դեմ մարտերում ցուցաբերած անձնագոհության և սխրագործ աշխատանքի համար»¹⁸: Մարտական գործողություններին Քյուրդամիրի ուղղությունում, Բաքվի, Դերբենդի և Պետրովսկի (ներկայումս՝ Մախաչկալա) շրջաններում «Թուրքական զորքերի

¹⁴ Ст' у Карапетян М., Генерал-лейтенант Ованес Ахвердян, Е., 2003, с. 9.

¹⁵ Ст' у ЗУУ, ф. 121, г.1, қ. 41, р. 160-161, қ. 1, р. 47:

¹⁶ Ст' у Аветисян Г., նշվ. աշխ., էջ 211:

¹⁷ Ст' у Фабիկանյան Կ., նշվ. աշխ., էջ 137-139:

¹⁸ Государственный архив Краснодарского края. Инвентарный N 9418, л. 2.

դեմ ինքնագոհ աշխատանքի և սխրագործությունների համար>> Գեորգիյան խաչի 3-րդ և 2-րդ աստիճանների շքանշաններով պարգևատրվեցին նույն զորաջոկատի Սահմանապահ 1-ին հարյուրյակի ավագ ունտերսպա Մանուկ Խաղդաջևը, եֆրեյտորներ Արշակ Հարությունովը և Արզուման Մանուչարովը¹⁹: 1918թ. մայիս-դեկտեմբեր ամիսներին ծանր մարտերում կատարած սխրանքների համար Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարի հրամանով Գեորգիյան խաչի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին Ջապարոժյան հարյուրյակի շարքայիներ Արշակ Աղաբեկովը, Սկրտիչ Մելքունովը, Բոգդան Ավագովը, զինվորներ Եղիշ Կասպարովը, Ստեփան Հարությունովը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ: Գեորգիյան խաչի երեք՝ 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին կազակային զորաջոկատի 2-րդ դաշտային մարտկոցի շարքային Արսեն Հախումովը և Սահմանապահ 1-ին հարյուրյակի եֆրեյտորներ Արշակ Հարությունյանը և Արզուման Մանուչարովը, երկուական Գեորգիյան խաչերով պարգևատրվեցին Սահմանապահ 1-ին հարյուրյակի եֆրեյտոր Հովհաննես Ֆարգոդյանը, 2-րդ դաշտային մարտկոցի շարքայիներ Խաչատուր Ավանեսովը, Հովհաննես Միրզոևը, Լևոն Ալահվերդյանը, 1-ին լեռնային-ծիավոր մարտկոցի ռմբարկու Վարազ Մկրտչյանցը և ուղեկցորդ Հապետ Հովհաննեսյանցը, Սուրբ Գեորգիի մեկական շքանշանով պարգևատրվեցին՝ Ումանյան հարյուրյակի կրտսեր ունտերսպաներ Մարտիրոս Սարկիսովը, Միրոն Խաչատուրովը, Իվան Բալաևը, Արմենակ Միսկարյանցը, 4-րդ դաշտային մարտկոցի ֆելդֆեբել Հովհաննես Գեյլանը, նշանառու Լևոն Խալաֆյանը, հետախույզներ Իսրայել Դադաևը, Սկրտիչ Տեր-Մինասովը, 1-ին ծանր մարտկոցի ռմբարկու Նավասարդ Սանդարյանցը, ճարտարագործական վաշտի սակրավոր Ավետիս Ամիրովը, Ֆելդֆեբել Սեմյոն Հայրապետովը և շատ ուրիշներ²⁰:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, գույքագրային N 9418, թ. 9-10:

²⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 2-16:

Նկատենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը Կովկասյան բանակում ունեին մեծ տեսակարար կշիռ: 1917թ. սկզբի դրությամբ, ռուսները կազմում էին Կովկասյան բանակի անձնակազմի 42, ուկրաինացիները՝ 30, հայերը՝ 10, վրացիները՝ 8, գերմանացիները՝ 4, լեհերը՝ 1,5 տոկոսը: Մնացած մասը կազմում էին բելոռուսները, թաթարները, հրեաները և լատիշները: Նույնպիսին էր նաև բանակի սպայական կազմի պատկերը: Ռուսները սպաների 60 տոկոսն էին, ուկրաինացիները՝ 10, հայերը՝ 8-9, ապա հետևում էին վրացիները, լեհերը և այլ ազգությունների ներկայացուցիչները²¹:

Հայ ժողովրդի հազարավոր զավակներ Կովկասյան ճակատում պատերազմին մասնակցել են հայկական զորամասերի կազմում: Դրանցից սկզբնական շրջանում կազմավորվեցին կամավորական չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ջոկատները, այդ ջոկատների հրամանատարներ նշանակվեցին ազգային-ազատագրական պայքարում թրժված հայդուկներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին: Ավելի ուշ կազմավորվեցին 5-րդ, 6-րդ և 7-րդ հայկական ջոկատները և կամավորների թիվը 1915թ. գարնանը հասավ 6500-ի²²:

Հայկական 1-ին կամավորական ջոկատը /հրամանատար՝ Անդրանիկ/, որը ձևավորվել էր 1914թ. հոկտեմբերի 23-ին Սալմաստում, գեներալ Չերնոզուբովի զորաջոկատի կազմում, գործում էր Սալմաստ-Վան ուղղությամբ: Ջոկատի 1200 հոգանոց անձնակազմի մեծ մասը արևմտահայեր էին: Ջոկատը աչքի ընկավ հատկապես Դիլմանի ճակատամարտում /1915թ. ապրիլ/, այնուհետև կամավորները ակտիվորեն մասնակցեցին Վանի ազատագրմանը /1915թ. մայիս/ և Բիթլիսի գրավմանը /1916թ.

²¹ Տե՛ս РГВИА, ф. 2320, оп. 1, д. 212, л. 4, նաև ф. 2548, оп. 1, д. 3, л. 358-359.

²² Տե՛ս Կարապետյան Մ., Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Հայկական բանակ», Ե., 1999, N 2, էջ 67:

փետրվար/²³: Հայկական 2-րդ կամավորական ջոկատը 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին գեներալ Նիկոլակի՝ Բայազետյան ռուսական զորաջոկատի կազմում մասնակցեց Վանի գրավմանը, Վանի հարավ-արևելյան շրջանների՝ Ախթամարի, Մակսի, Շատախի, Ագատակերտի, Ջեյվայի, Արճեշի և հայկական այլ բնակավայրերի ու գյուղերի ազատագրմանը /1915թ.մայիս-հունիս/, Մուշի ու Բիթլիսի գրավմանը /1916թ. փետրվար-ապրիլ/²⁴:

Հայկական 3-րդ կամավորական ջոկատը ռուսական Կարադերբենտյան զորաջոկատի կազմում մասնակցեց Սարիղամիշի օպերացիային /1914թ. դեկտեմբեր – 1915թ. հունվար/, այնուհետև Վանի, Մուշի և Բիթլիսի ազատագրման կռիվներին²⁵: Սարիղամիշից մինչև Ռևանդուզ /Իրան/ ձգվեց 4-րդ հայկական կամավորական ջոկատի մարտական ուղին: 1914-1916թթ. ջոկատը 2-րդ և 3-րդ հայկական ջոկատների հետ մասնակցեց Վանի, Մուշի, Բիթլիսի համար մղված ծանր մարտերին և նրանց գրավմանը: Հայկական 4-րդ կամավորական ջոկատը 1916թ. հունվար-հունիս ամիսներին ռուսական բանակի Սուլդուզի զորաջոկատի կազմում մասնակցեց Ռևանդուզի գրավման մարտերին, որոնց ընթացքում, մայիսի 30-ին, գրոհներից մեկի ժամանակ, թշնամու զնդակից հերոսաբար զոհվեց ջոկատի հրամանատար, ժողովրդական հերոս Քեռին²⁶:

Հայկական 5-րդ կամավորական ջոկատը /հրամանատար՝ Վարդան/ կազմավորվեց Երևանում: Նրա ձևավորման աշխատանքները սկսվել էին դեռևս 1914թ. դեկտեմբերից: Սակայն, Կովկասյան բանակի զինապահեստներում հրացաններ չլինելու պատճառով, ջոկատը չսպառազինվեց և չկարողացավ մասնակցել պատերազմի առաջին շրջանի մարտական գործողություններին:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 1-31, գ. 16, թ. 3:

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 8, 14, 15, գ. 1, թ. 1-18, գ. 16, թ. 3-5:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 8., թ. 20-21, գ. 3, թ. 1-31:

²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 78-79:

Հայկական 6-րդ ջոկատը /կոչվել է նաև Հնչակյան 6-րդ խումբ/ ստեղծվեց Կարակուրտում՝ գեներալ Բարաթովի գլխավորած ռուսական զորաջոկատի կազմում: Ջոկատը 1915թ. դեկտեմբեր – 1916թ. հունվար ամիսներին մասնակցեց Էրզրումի օպերացիային, 1916թ. փետրվար – մարտ ամիսներին զրավեց Էրզրումը: Առաջին հրամանատարը ռուսական բանակի սպա, կապիտան Յ.Ջանփոլադյանն էր, իսկ քիչ ուշ նրան փոխարինեց պորուչիկ Գ.Ավշարյանը, որն էլ զոհվեց 1915թ. ամռանը, Շարյան գետի ափին ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Ավշարյանին փոխարինեցին Հայկ Բժշկյանը /Գայ/, ապա՝ Պանդուխտը /Միքայել Սերյան/:

Հայկական 7-րդ ջոկատը /հրամանատար՝ իշխան Հ.Արդուբյան/ կազմավորվեց 1915թ. աշնանը Երևանում. այն ջոկատների պահեստային ուժն էր, հետագայում անցավ հյուսիսային Իրան և աչքի ընկավ հատկապես Ռևանդուզի ճակատամարտում²⁷:

Մարտերում ցուցաբերած խիզախության և քաջության համար հայ կամավորներից շատերը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև Գեորգիյան խաչով: Այսպես, օրինակ՝ միայն 2-րդ կամավորական ջոկատի անձնակազմից /հրամանատար՝ Դրո/ 1914թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Գեորգիյան խաչով պարգևատրվեց 76 կամավորական /որոնցից երկուսը՝ առաջին աստիճանի/, 138 մարդ պարգևատրվեց մեդալներով²⁸: Մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար Գեորգիյան խաչի 2-րդ և 4-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվեցին նաև «Արարատյան զորաջոկատի» կազմի մեջ մտնող /2-րդ, 3-րդ, 4-րդ ջոկատներ/ տասնյակ կամավորներ²⁹: 1914-1916 թթ. Վանի, Բիթլիսի, Մուշի համար մղված մարտերում ցուցաբերած քաջության և հերոսության համար Գեորգիյան

²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 19:

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 3, գ. 16, թ. 3:

²⁹ Տե՛ս РГВИА, ф. 551, оп. 3, д. 20; д. 9, л. 200.

խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվածների թվում էին՝ Հայկական 2-րդ կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ պորուչիկ Գարեգին Նժդեհը³⁰, 3-րդ աստիճանի Գեորգիյան շքանշանով՝ Հայկական 4-րդ կամավորական ջոկատի հրամանատարի տեղակալ Միքայել Արզումանովը, նույն ջոկատի վաշտի հրամանատար, պարսկահայ Շերմազան /Շերամ/ Տեր-Անդրեասյանը, վաշտի հրամանատարի տեղակալ Միքայել Պարիկյանը և ուրիշներ³¹: Ռազմի դաշտում զոհվեցին ավելի քան 700 կամավորականներ³²:

1915թ. դեկտեմբերից 1916թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում հայ կամավորական ջոկատները վերակազմավորվեցին, և նրանց հիմքի վրա ձևավորվեցին հայկական վեց հրաձգային գումարտակներ, որոնցում 1917թ. հունվարի 1-ի դրությամբ ծառայում էր 5179 մարդ, որոնցից 174-ը՝ սպա³³:

Հայկական 1-ին գումարտակը 39-րդ դիվիզիայի կազմում մեծ սխրանքներ գործեց Քիլքիթի և Երզնկայի շրջանում 1916թ. հունիսի 25-ից 27-ը տևած կատաղի մարտերում: Շտաբային զեկուցագրում ասված է, որ հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրամայվեց գրոհել թուրքական անառիկ դիրքերի դեմ, Հայկական 1-ին գումարտակն արագ կատարեց հանձնարարված առաջադրանքը. առաջանալով լեռնաշղթայի վրայով և միանալով հարևան զորամասերին՝ տիրեց Բալինթափակ գյուղի մոտ գտնվող N 2300, 2350 և 2660 բարձունքներին: Դրանից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, հեծելագորի պաշտպանությամբ սկսեցին նահանջել: «Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր

³⁰ Գարեգին Նժդեհը, 1-ին և 2-րդ աստիճանի Գեորգիյան խաչի շքանշաններով պարգևատրվելուց բացի, ներկայացված էր նաև Գեորգիյան խաչի 3-րդ և 2-րդ, Սուրբ Աննայի 4-րդ «Քաջության համարե մակագրությամբ և Սուրբ Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշաններով պարգևատրվելու /տե՛ս Վրաստանի կենտրոնական պետական արխիվ /այսուհետև՝ ՎԿՊԱ/, ֆ. 1, ց. 2, գ. 85, թ. 1-6:

³¹ Տե՛ս շԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 9, թ. 75:

³² Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 2:

³³ Տե՛ս ՐԳՅԱ, ֆ. 2100, օր. 1, ժ. 44, լ. 175-176:

կազմավորումը նոր ավարտած գումարտակը դրսևորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն և անդրդվելի տոկունություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից ավելին /55 տոկոսը/ ու նորից գործը գլուխ բերել՝ հաճախ վեր է մինչև իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»³⁴: Հուլիսի 11-ին 39-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերի հետ Հայկական 1-ին գումարտակը ծանր մարտերից հետո առաջիններից մեկն էր, որ մտավ և գրավեց Երզնկան:

Ռազմաճակատի պարսկական հատվածում իրեն լավագույնս դրսևորեց Հայկական 3-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Արտեմ Տեր-Նիկողոսյանի հրամանատարությամբ:

Հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 9-ը գումարտակն անընդհատ արշավանքների, կռիվների ու ընդհարումների մեջ էր: Օգոստոսի 2-ից 8-ը տեղի ունեցած մարտերում տալով 140 սպանված, 20 վիրավոր և անհայտ կորած՝ գումարտակն արյունահեղ կռիվներից հետո թուրքերից ազատագրեց Քեմիշլու, Դուրու և Սիակով գյուղերը³⁵:

Պարսկական ռազմաբեմում իրենց փայլուն դրսևորեցին Հայկական 4-րդ և 6-րդ հրաձգային գումարտակները, որոնք մեծ սխրանքներ գործեցին Հյուսիսային Իրանում և Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական գործողություններում:

Հուլիսի 31-ի լուսաբացին Հայկական 4-րդ գումարտակը, ռուսական զորամասերի հետ թեժ մարտերում տիրելով շրջակա բարձունքներին, գրավեց ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կետ Սազիզը: Այդ հաղթանակի կապակցությամբ Սազգի զորաջոկատի պետ, գեներալ Ա. Կուլեբյակինը փոխգնդապետ Հովսեփյանին հղել է հեռագիր, որում ասված էր. «Շնորհավորում եմ գումարտակին առաջին հաղթանակով և

³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թ. 6-7; **Ղաթանյան Գ.**, Հայերու մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատին վրա 1914-1917թ.թ., «Հայրենիք», Բոսթոն, 1927, N 12, էջ 112:

³⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 17, թ. 1-4:

մարտական մկրտությամբ: Շնորհակալություն մարտական փայլուն աշխատանքի համար: Այսօր անձամբ եղա Ձեր գրաված անառիկ դիրքերում և տեղում գնահատեցի հաղթահարած հայ հրաձիգների ջանքն ու սխրագործությունը»³⁶:

Հայկական գումարտակի սխրագործությունը, անձնվիրությունը բարձր գնահատեց նաև կորպուսի հրամանատար գեներալ Չերնոզուբովը: Գնդապետ Հովսեփյանին հղած նրա հեռագրում ասված էր. «Սրտանց ուրախ եմ Ձեր գլխավորած կտրիճների փայլուն գործողություններից: Թող օգնի Ձեզ Աստված և հետագայում»³⁷:

1917թ. հունիսի 18-ին 4-րդ գումարտակը Հայկական 6-րդ հրաձգային գումարտակի հետ գրավեց նաև ռազմավարական կարևոր մի այլ կետ՝ Փենջվինը: Փենջվինի շրջանում Հայկական 4-րդ գումարտակի մղած մարտական գործողությունների և անձնակազմի ցուցաբերած տոկունության ու սխրագործության մասին նրա հրամանատարը գրում է. «...կոշիկները, համազգեստները, սպիտակեղենը և զինամթերքը ամբողջովին մաշվել էին: Բոլորը մերկ էին, կիսաքաղց: Տրոպիկական շոգին, մերկ մարմինները թաքցնելու համար կրում էին ձմեռային վերնաշապիկներ, հաճախ էլ՝ հագնում շինելներ: Հրաձիգները հյուժվել էին մարտական ծանր առաջադրանքների կատարումից: Չնայած այդ ամենին, տարած հաղթանակներից նրանց ոգին բարձր էր, և մարտիկները անտրտունջ կատարում էին իրենց պարտքը՝ քաջ գիտակցելով, որ անհրաժեշտ է վերջնականապես հաղթել դարավոր թշնամուն»³⁸:

Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը փոխգնդապետ Միքայել Մելիք-Մուրադյանի գլխավորությամբ մեծ սխրանքներ գործեց Սազգի շրջանում 1916թ. օգոստոսի 6-ից մինչև 10-ը տեղի ունեցած կատաղի մարտերում:

Նույն թվականի ամռանը գումարտակը մեծ սխրանքներ

³⁶ Նույն տեղում, գ. 18, թ. 2-29:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում, թ. 2-29:

գործեց նաև Փենջվիհնի շրջանում: Հունիսի 15-ից 17-ը տևած ար-
յունահեղ ճակատամարտում գրավեց Բիստանը և նրա անառիկ
համարվող դիրքերը:

Գումարտակի սխրագործությունները շնորհավորեցին
Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտե-
նանտ Պրժևալսկին և կորպուսի հրամանատար, գեներալ-լեյ-
տենանտ իշխան Վոդբուլսկին: Դիվիզիայի հրամանատար, գեներ-
րալ Կարպովը, հեռագրով շնորհավորելով գումարտակին լավա-
գույն գործերի համար, իր հպարտությունն էր հայտնում առ այն,
որ հայ հրաձիգները մտնում են դիվիզիայի կազմի մեջ³⁹:

Ռազմական գործողություններում իրեն լավագույնս դրսևո-
րեց նաև Հայկական 5-րդ հրաձգային գումարտակը՝ զնդապետ
Պավել Բեկ-Փիրունյանի գլխավորությամբ: Հիմնականում դարա-
բաղցիներից կազմված գումարտակը 1916թ. հուլիսի 12-ից
մինչև օգոստոսի վերջը անընդհատ արշավանքների, կռիվների և
ընդհարումների մեջ էր: Կովկասյան 7-րդ կորպուսի կազմում
ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ Պարսկաստանի
Դրիթկա-Ռայաթ գյուղի և Ասխաբա լեռան մոտ 1916թ. օգոստոսի
9-ին տեղի ունեցած նշանավոր ճակատամարտում, որտեղ ռու-
սական զորքերը գլխովին ջախջախեցին թուրքական լավա-
գույն՝ 4-րդ /Դարդանեյան/ դիվիզիան: Այդ ճակատամարտում,
բացի ռազմական մեծ ավարից, ռուսական զորքերը գերի
վերցրեցին 2000 թուրք զինվորների և 60 սպայի⁴⁰: Միայն օգոս-
տոսյան մարտերի համար մարտական պարգևների ներկա-
յացվեց գումարտակի ամբողջ սպայական կազմը, իսկ քիչ անց՝
ևս 50 տոկոսը: Գումարտակի շատ հայ զինվորներ պարգևա-
տրվեցին Գեորգիյան խաչերով ու մեդալներով:

1916թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայկական
5-րդ գումարտակը, գեներալ Կուլեբյակիհնի գլխավորած Սուլջ-
Բուլաղի զորաջոկատի կազմում, 4-րդ և 6-րդ գումարտակների
հետ գրավեց Բանն քաղաքը:

³⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 11:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 10:

1916թ. դեկտեմբերի 13-ից մինչև 15-ը տևած կռիվներում 5-րդ գումարտակը մյուս զորամասերի հետ միասին գրավեցին Վանի շրջանի Աթաման գյուղը և Ոստանի ուժեղ ամրացված թուրքական դիրքերը⁴¹: Գեներալ Գ.Ղորղանյանի վկայությամբ, զորասյան ռազմական գործողությունների և մարտերի ծանրությունը գրեթե ամբողջովին ընկել էր հայ հրաձիգների վրա, նրանց գործողությունները «ապացուցում են մարտիկների բարձր ռազմական ոգին, կուռ կարգապահությունը և իրենց վրա դրված պարտքի կատարյալ գիտակցությունը»⁴²:

Միայն 1917թ. հունիսի 15-ից 17-ը տևած՝ Բիստանի /Պարսկաստան/ ճակատամարտին մասնակցելու համար Գեորգիյան խաչի և այլ բարձր պարգևների էին ներկայացվել ավելի քան 68 հայ հրաձիգներ⁴³: Քիչ չէր գոհերի թիվը: Չոհված հայ սպաների մեջ էին 4-րդ գումարտակի պրապորշչիկ Յովհաննես Խաչիյանը, գումարտակի հրամանատար Սուրեն Բազյանը և շատ ուրիշներ⁴⁴:

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բանակում տարվող ազգայնացման քաղաքականության և ազգային զորամասերի կազմավորման շնորհիվ հայկական կանոնավոր գումարտակներն ընդարձակվեցին, և նրանց հիմքի վրա ձևավորվեցին հայկական վեց հրաձգային գնդեր, որոնք մտան գործող բանակի կազմի մեջ: Նրանցից դեռևս կազմավորման ընթացքում գտնվող 2-րդ և 5-րդ գնդերն իրենց հռչակեցին «մահապարտներ» պատվավոր անունով: «Մենք, Յայկական 5-րդ հրաձգային գումարտակի

⁴¹ Տե՛ս նույն տեղում, թ. 1-24:

⁴² **Ղորղանյան Գ.**, նշվ. աշխ., «Հայրենիք», Բոսթոն, 1927, N 2, էջ 117:

⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 19, թ. 11:

⁴⁴ Առաջին աշխարհամարտի տարիներից Կովկասյան ճակատում հայկական կամավորական ջոկատների և հրաձգային գումարտակների կազմավորման և մարտական գործունեության մասին հանգամանորեն տե՛ս **Կարապետյան Մ.**, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում /1914-1917թ.թ./, Ե., 1999:

բոլոր հրաձիգներս և սպաներս, – ասված է 1917թ. հուլիսի 15-ի 5-րդ գումարտակի ընդհանուր ժողովի որոշման մեջ – հրամանատարի գլխավորությամբ միահամուռ որոշել ենք այսօրվանից անցնել մահապարտների գումարտակների շարքը և այսուհետև կոչվել մահապարտների 5-րդ հայկական հրաձգային գումարտակ: Քաջ գիտակցելով, որ գործը ոչ թե անվան, այլ այն ծանրագույն խնդրի մեջ է, որը մենք մեզ վրա ենք վերցնում, ազատ Ռուսաստանի և Հայրենիքի առջև մենք երդվում ենք՝ ազնվորեն և վեհանձնությամբ ծառայել հայրենիքին նրա համար դժվարին այս ժամանակներում... Մենք մինչև արյան վերջին կաթիլը կկանգնենք և ցույց կտանք հակառակորդին մեր մահապարտ գումարտակի հարվածային ուժը...»⁴⁵: Գնդապետներ Դավիթ Կարաքեչիշյանի, Սերոբ Սամարցյանի, Արտեմ Հովսեփյանի, Պողոս Բեկ-Փիրումյանի, Լևոն Հովսեփյանի և Սիքայել Մելիք-Մուրադյանի հրամանատարությամբ գործող հայկական հրաձգային զնդերը հատկապես աչքի ընկան 1918թ. երգրումի, Վանի, Իգդիրի մոտ տեղի ունեցած մի շարք մարտական գործողություններում: 1917թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ, Հայկական 1-ին, 2-րդ և 5-րդ զնդերում միասին կար 3441 զինվոր և 143 սպա⁴⁶:

1917թ. նոյեմբերին վերոհիշյալ զնդերի ընդարձակման շնորհիվ և նրանց հիմքի վրա կազմավորվեց հայկական Առանձին բանակային կորպուսը, որը ռուսական զորքերի հետ միասին, ապա վերջինիս՝ Կովկասյան ճակատից հեռանալուց հետո իր վրա կրեց ռազմաճակատի պաշտպանության ծանրագույն խնդիրը: Հայկական կորպուսի հրամանատարը ռուսական բանակի հմուտ և փորձված զորապետ, գեներալ-լեյտենանտ Ֆոնա /Թովմաս/ Նազարբեկովն էր: Կորպուսի կազմում կային երկու հրաձգային դիվիզիա, հրետանային, հեծելազորային բրիգադներ և մի շարք առանձին մասնագիտացված այլ զորամասեր և ստորաբաժանումներ: Կորպուսի զորամասերը 1917թ. նոյեմբեր – 1918թ. մայիս ամիսներին անհավասար, ծանր, բայց հերոսական մարտեր

⁴⁵ ՎԿՊԱ, ֆ. 1818, ց. 2, գ. 82, թ. 57:

⁴⁶ ՏԵՍՐԳՅԱ, ֆ. 2100, օր. 1, լ. 72, լ. 273.

էին մղել թուրքական՝ թվով մի քանի անգամ գերազանցող զորաբանակների դեմ: Այդ զորամասերը վճռական դեր էին խաղացել 1918թ. մայիսի 22-ից 29-ը տեղի ունեցած՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում տարած հաղթանակներում, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան ինչպես հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, այնպես էր նրա պետականության վերականգնման գործում: 1918թ. հուլիսի 19-ի տվյալներով, Առանձին հայկական կորպուսի մարտական կազմը ներկայացնում էր հետևյալ տեսքը.

Երևանի զորաջոկատ՝ 491 սպա, 14040 զինվոր,
Ներքին Ախտայի զորաջոկատ՝ 150 սպա, 2172 զինվոր,
Դիլիջանի զորաջոկատ՝ 162 սպա, 2157 զինվոր,
Նոր Բայազետի ջոկատ՝ 15 սպա, 403 զինվոր,
Ընդամենը՝ 19590 մարդ, որից՝ 818 սպա, 18772 զինվոր⁴⁷:

Բացի վերոհիշյալ կորպուսից, Կովկասյան ճակատում կազմավորվեցին Անդրանիկի հայկական Զավաքական ջոկատը /կոչվել է նաև Զայկական հատուկ հրաձգային դիվիզիա/ և մի շարք այլ՝ ոչ կանոնավոր զորամասեր, որոնց անձնակազմների զգալի մասը արևմտահայեր էին: Այսպես, օրինակ, 1917թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Երզնկայում կազմավորվել էր կամավորական խումբը՝ Մուրադի գլխավորությամբ, Երզրումում՝ բերդապահ գունդը՝ Թորգոմի հրամանատարությամբ, որը ուներ 600-700-ից ավելի զինվոր, Բաբերդում՝ կամավորական զորամասը՝ Սեպուհի գլխավորությամբ, Խնուսում՝ Սասունի գունդը՝ Մուշեղի և Մանուկի հրամանատարությամբ, Ալաշկերտում՝ տեղական զորամասեր՝ Սմբատի անմիջական գլխավորությամբ⁴⁸: 1918թ. մարտի դրությամբ արևմտահայ կանոնավոր և անկանոն ուժերը միասին ունեին 25 հազար անձնակազմ⁴⁹:

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 6, թ. 24, նաև *Հարությունյան Կ.*, Հայկական ազգային կազմավորումները 1918-1945թ.թ., Ե., 2002, էջ 18-19:

⁴⁸ Տե՛ս Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, էջ 591:

⁴⁹ Տե՛ս Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում /1914-1918թթ./, Ե., 1999, էջ 193:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄՓՅՈՒՌՔԱՅԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի դեմ պատերազմին իրենց գործուն մասնակցությունն ունեցան նաև արտասահմանյան հայ զաղթօջախների հայերը: Պատերազմի տարիներին նրանք նյութական և բարոյական օգնություն ցուցաբերեցին մարտնչող հայ կամավորներին: Բագրատ եպիսկոպոսի կազմած մի զեկուցագրից հայտնի են դառնում որոշ նվիրատուների անուններ: Այսպես, օրինակ, հայ կամավորական ջոկատների համար 1355 ռուբլի էր ստացվել Նյու Յորքից՝ Պետրոգրադի ռուսական արտաքին բանկի միջոցով, 450 ռուբլի 0,7 կոպեկ՝ Նյու Յորքից, սեբաստացիների Ուլաշ խմբից, 3409 ռուբլի 10 կոպեկ՝ Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնաժողովից¹: 5000 ռուբլի էր ստացվել Կահիրեի հայկական կոմիտեից, 600 ռուբլի՝ ժնկի հայ ուսանողներից, 175 ռուբլի՝ Յուսիսային Ամերիկայի Չելսի քաղաքի Վասպուրականի ուսումնական ընկերությունից, 250 ռուբլի՝ Նյու Յորքի Երզնկաց ընկերությունից: Կամավորների ընտանիքների օգտին նույնպես նվիրատվություններ են արել, և թիֆլիսում Մարսելի «Հայ երիտասարդաց միությունից» ստացվել է 600 ռուբլի, Եդեսիայից՝ Գր. Սարգսյանից /մատաղացու երինջի վաճառքից/՝ 100 ռուբլի, Ապրեսյանից, Ի. Ղազարյանից և Մ.Գաբրիելյանից՝ 10-ական ռուբլի և այլն²:

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքիայի դեմ պատերազմին մասնակցություն ցուցաբերելու մղումը լայն թափ

¹ ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 3, թ. 4-5:

² Նույն տեղում, գ. 140, թ. 93-98; «Հորիզոն», 1916, 23 փետրվարի:

ստացավ Եգիպտոսում, Կիպրոսում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Բուլղարիայում, ամենուր, որտեղ ապրում էին հայեր: Ըստ Կիպրոսում Ուսաստանի դեսպանորդի վկայության, մինչև 1915թ. փետրվար այդ նպատակով դեսպանություն էին դիմել մոտ 1000 հայեր: Անգլիայի, Ֆրանսիայի և Բելգիայի հյուպատոսների մոտ ցուցակագրվել էին կամավորական ջոկատներ, և կազմակերպվել դրամական հանգանակություններ: Հայտնվում էր նաև Մյունխենից և Փարիզից հայ բժիշկների՝ որպես կամավոր ճակատ մեկնելու ցանկության մասին³: Կամավորագրությունը մեծ աշխուժություն առաջ բերեց դաշնակցության շարքերում և կազմակերպություններում: Ամենուր ձեռնարկում էին կուսակցական կամավորների զինվորագրում և նրանց ռազմաճակատ ուղարկելու միջոցառումներ: ՀՀ Դաշնակցության Եգիպտոսի կոմիտեն հրատարակեց կամավորական շարժմանը նյութական օգնություն կազմակերպելու՝ «Օգնենք հայ կամավորներին» կոչը, որին արձագանքեցին Եգիպտահայ հասարակության բոլոր շրջանները և կազմակերպությունները: Եգիպտոսի կոմիտեի ձեռնարկած աշխատանքների մասին կոչում ասվում է. «ՀՀ Եգիպտոսի կոմիտեն կու գա ոչ միայն ձեռն յուրաքանչյուրին հրավիրելու միանվագ ու վերջնական զոհաբերության մը, այլ ուղղակի կապել Կռվին՝ մեր կամավորական զունդերու օգտին զինվորական տուրքով մը, որ պիտի շարունակվի՝ որքան ատեն որ շարունակվի Հայ կռիվը»⁴:

Պատերազմին, առաջին իսկ օրերից, ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Հնչակյան կուսակցությունը: Նրա կենտրոնական մարմնի կողմից հրապարակված շրջաբերականով, բոլոր շրջաններին և մասնաճյուղերին հանձնարարվեց ամեն կերպ օժանդակել կամավորական խմբերի կազմակերպմանը: Արձագանքելով հայրենիքի ազատագրության համաժողովրդական զարթոնքին՝ կամավորական շաժման մեջ ընդգրկվեցին հնչակ-

³ Նույն տեղում, գ. 114, թ. 87-93:

⁴ Նյութեր ՀՀ Դաշնակցության պատմության համար, հ. 1, Բեյրութ, 1984, էջ 240:

յան գրեթե բոլոր շրջանները: Ռումինիայից, հաղթահարելով մի շարք խոչընդոտներ (կառավարության թուլություն, անցագրերի ապահովում, ճանապարհածախս և այլն), Թիֆլիս եկան կամավորական երեք խմբեր, որոնցից առաջինը՝ 107 կամավոր, գլխավորում էր իր սխրագործություններով և քաջությամբ հայտնի և հետագա մարտերի ընթացքում նահատակված Անդրանիկ երիցյանը: Պարսկաստանի մասնաճյուղը կազմեց 30 հոգանոց կամավորական մի խումբ, որը Ռշտունու գլխավորությամբ մտավ Յանազասպի հրամանատարությամբ գործող 3-րդ կամավորական խմբի կազմի մեջ: Անդրանիկի գլխավորած 1-ին կամավորական խմբի մեջ մտան Արևմտյան Հայաստանից գաղթած մի խումբ հնչակյաններ, Ֆրանսիայի մասնաճյուղը հավաքագրեց շուրջ 40 կամավոր, որոնք Գուրգեն Թահմազյանի գլխավորությամբ մտան ֆրանսիական բանակի մեջ և եվրոպական ռազմաճակատներում կռվում էին Թուրքիայի դաշնակից գերմանական բանակի դեմ: Կամավորագրությունը հատուկ աշխուժություն առաջ բերեց Ամերիկայի հնչակյան մասնաճյուղում: Ամերիկայի գործադիր մարմինը հրատարակեց կամավորագրության հրավիրող հայտնի՝ «Կարմիր կոչը», որին արծագանքեցին շրջանի բոլոր մասնաճյուղերը: Այսպես, օրինակ, Ռեյսին քաղաքի հնչակյան մասնաճյուղի կազմակերպած կամավորագրական աշխատանքների մասին ասված է. «Ընկեր Վահան Մսրյանը պաշտոն ուներ կամավորներ արծանագրել: Սարքվեցավ հրապարակային ժողով. Հանգանակվեցավ 1200 տուլար և հրապարակով կամավոր արծանագրվեցան քաջակորով Հնչակյան ընկերները հուռաներու և խանդավառ ծափերու ներքև: Նույն խանդավառությունը առաջացավ հետագային Կիլիկիո ճակատը մեկնող կամավորներու ժամանակ»⁵: Ամերիկայում կամավորագրության կազմակերպման գործում մեծ ներդրում ունեցավ Պանդուխտը (Միքայել Սերյան), որը, շրջելով մասնաճյուղից մասնաճյուղ, իր հրապարակային ելույթներով և կազմակերպ-

⁵ Ճերէճեան Ե., Պանդուխտ, Պեյրութ, 1999, էջ 13-14:

չական հանդիպումներով ստեղծում էր խանդավառություն և լուծում շատ գործնական դժվարություններ⁶:

Կովկաս ժամանած կամավորականներին կազմակերպելու նպատակով Թիֆլիսում տեղի ունեցավ սփյուռքահայ հնչակյան կուսակցական միջըրջանային պատգամավորական ժողով, որի մասին փաստաթղթերից մեկում ասված է. «Պարսկաստանի մասնաճյուղերը խորհրդաժողով են կազմել, Լազոյին պատգամավոր են ուղարկել, նա եկել է Կովկաս, - Թիֆլիսի մեջ ժողով են կազմել - պատգամավորներ են եկել Պաքուից, Էջմիածնից, Երևանից, Կարսից, Նախիջևանից և այլն, 32 հոգի և ժողով են կազմել, կամավորական խնդիրները հաստատ հիմունքների վրա դրել, ընտրել են Կենտրոնական Վարիչ Կովկասի, որոնք Կենդրոնի իրավունքով գործերը վարում են»: Արդեն 1914թ. ամռանը Թիֆլիսի նահանգային ոստիկանությունը արձանագրում էր. «Յնչակ պարտիան ... բացառապես զբաղված է կամավորներ հավաքագրելով և Թուրքիա ուղարկելով թուրքական կառավարության դեմ կռվելու համար»: Յնչակյան կամավորների համար պատասխանատու էր նշանակված Արտեմիսը, իսկ տեղակալներ՝ Յաճի Նազիկը և Սարգիս Սարգսյանը՝ Փարամազի եղբայրը: Թիֆլիսում հնչակյան կամավորականները համալրվեցին հիմնականում Յ.Ջանփոլադյանի գլխավորած Յայկական 6-րդ ջոկատում և հետագայում ամենաակտիվ մասնակցությունն ունեցան Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններում⁷:

Եգիպտոսում ռուսական դեսպանորդ Սմիռնովը, 1915թ. փետրվարի 22-ին հայտնում է Պետրոգրադ, որ երկրում հավաքվել են ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից ժամանած մոտ 1000 հայ կամավորներ: 15 հազար հայերի՝ թուրքերի դեմ կռվելու պատրաստակամության մասին 1915թ. փետրվարի 25-ին Բուլղարիայի արտաքին գործերի նախարարությանը հայտնում էր Սոֆիայում Ռուսաստանի դեսպանորդ Սավիցկին: Դեսպա-

⁶ Նույն տեղում, էջ 14-16:

⁷ Նույն տեղում, էջ 17-18:

Նորոզը ներկայացնում էր նաև «Պրո Արմենիա» թերթի խմբագիր Մ.Վարդանյանի խնդրանքը՝ առաջադրված կամավորական խմբերի կազմակերպման գլխավոր կոմիտեի կողմից՝ հնարավորություն տալ Կիլիկիայի սևծովյան ափերի և Փոքր Հայաստանի՝ Ամերիկայում գտնվող հայությանը վերադառնալ երկիր, նրան զինել թուրքերի դեմ կռվում: Մ.Վարդանյանը մման առաջարկություն արել էր նաև Սոֆիայում Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին⁸:

Քրիստոնյաների դարավոր թշնամու դեմ կռվելու համար կիլիկիահայության ցանկության մասին ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպան Բախմետևին դիմել էր Ադանայի ջարդերից փրկված և Ամերիկա գաղթած հոգևոր առաջնորդը: Նրա՝ 1914թ. հոկտեմբերի 30-ի նամակից երևում է, որ տարագրության մեջ գտնվող կիլիկիահայությունն իր վրա է վերցնում կամավորների հանդերձավորման և Ռուսաստան մեկնելու ծախսերը: Զինելու և ռազմաճակատ ուղարկելու հարցերը նա թողնում էր ռուսական իշխանություններին⁹: Ամերիկահայ կամավորների առաջին խումբը դուրս եկավ 1915թ. մարտի 12-ին, Արխանգելսկի վրայով հասավ Կովկաս, ղեկավարն էր մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը, նույն ճանապարհով դուրս եկավ մարտի 10-ին՝ Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդ խումբը՝ նոյեմբերի 21-ին՝ Ս.Շահենի գլխավորությամբ: Ամերիկահայ կամավորները՝ շուրջ 350 հոգի, Պանդուխտի հրամանատարությամբ մեկնեցին Կարս և սկսեցին զբաղվել զինավարժություններով¹⁰:

Հազարավոր սփյուռքահայեր պատերազմին մասնակցում էին զենքը ձեռքին՝ մարտնչելով այն բանակների կազմում, որտեղ ապրում էին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ մարտիկների թիվն անցնում էր 50 հազարից¹¹:

⁸ Տե՛ս РГВИА, ф. 2000, оп. 1, д. 38, л. 104.

⁹ Տե՛ս АВПР, ф. Политархив, 1914г., оп. 1, д. 3420, с. 164.

¹⁰ Տե՛ս ՃԷՐԷՃԵԱՆ Ե., նշվ. աշխ., էջ 19:

¹¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 547:

1916թ. նոյեմբերին Ֆրանսիական զորքերի կազմում ձևավորվեց նաև Արևելյան լեգեոնը, որի անձնակազմը համալրված էր Ֆրանսիայից, Եգիպտոսից, Ամերիկայից, Կիպրոսից և այլ երկրներից եկած հայ կամավորներով: 1918թ. նոյեմբերի 15-ին ֆրանսիական կառավարության որոշմամբ Արևելյան լեգեոնը վերանվանվեց Չայկական լեգեոն: Այն իր մարտական մկրտությունը ստացավ 1918թ. սեպտեմբերի 19-ին Արարայի ճակատամարտում: Չետագայում Չայկական լեգեոնը անգլո-ֆրանսիական զորքերի կազմում մասնակցեց նաև Սիրիայի և Լիբանանի ազատագրության համար մղված մարտերին: 1918թ. մայիսին Չայկական լեգեոնի կազմում կար չորս գումարտակ, հայ լեգեոնականների թիվը հասնում էր 4000-ի¹²: Ֆրանսիական զորքերի կազմում Սիրիա-պաղեստինյան ճակատում և Կիլիկիայում նրանք մասնակցեցին թուրքական բանակի դեմ պատերազմական գործողություններին: Թուրքական զորքերի դեմ մղված Արարայի ճակատամարտում աչքի ընկնելու համար ֆրանսիական հրամանատարության կողմից 25 հայ մարտիկներ պարգևատրվեցին «Մարտական խաչ» շքանշանով¹³:

Չայկական զորամասերի կազմավորմանը գաղթօջախներում ակտիվ մասնակցություն հանդես բերեցին ականավոր հասարակական գործիչներ Սկրտիչ Փորթուզալյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ: Մ.Փորթուզալյանը ռուս-թուրքական պատերազմի սկզբում «Արմենիա» թերթում տպագրած՝ «Թուրքահայերի վիճակը և մեր պարտքը» հոդվածում նշելով, որ թուրքերը, օգտագործելով պատերազմական իրադրությունը, կոտորում են հայերին, պահանջում էր անհապաղ կազմակերպել վերջիններիս ինքնապաշտպանությունը: Նշելով այն փաստը, որ ռուսահայերը կամավորական ջոկատներով օգնության են հասնում Թուրքիայում տանջվող ու նահատակվող իրենց եղբայրների՝ նա սփյուռքի հայերին հորդորում էր անտարբեր չմնալ

¹² Տե՛ս Պոյաճյան Տ.Ն., Չայկական լեգեոնը, Ուտթրթաուն, 1965, էջ 107:

¹³ Տե՛ս Գասպարյան Ռ., Չայկական լեգեոնը /1916-1920թթ./, Չայկական բանակ, Ե., 1996, N 1, էջ 11:

նրանց ճակատագրի հանդեպ: Եթե չեն կարող կամավորներ ուղարկել, գոնե թող օգնեն ռուսահայ կամավորներին նյութական միջոցներով: Հրապարակախոսը հայտարարում էր. «Ով որ հայ է, ով որ հայի անուն, հայի արյուն կկրե, ինչ կուսակցության ալ կպատկանի, իր պարտքը պիտի համարի համերաշխությամբ մասնակցել այս գործին, որ ընդհանուր հայության գործն է, ընդհանուր հայության պարտքն է: Թուրքահայաստանը ոչ այս, ոչ այն կուսակցության կպատկանի, այլ ընդհանուր հայության, անոր օգտի համար չաշխատողը ոչ թե այս կամ այն կուսակցութենե դուրս, այլ հայութենե դուրս պետք է համարի զինքը...»¹⁴: Այնուհետև, Փորթուզայանը հայտարարում էր, որ հայ կամավորներին նյութապես օգնելու նպատակով Մարսելում արդեն ստեղծվել է «Կովկասի հայ կամավորներուն նպաստող կոմիտե»։ Արտասահմանի հայ գաղթօջախների հայերը կարող են իրենց նվերներն ուղարկել այդ կոմիտեին, որն այնուհետև դրանք կտեղափոխի Թիֆլիս, որտեղ էլ այդ նվերները կծառայեն իրենց նպատակներին: Թերթում Փորթուզայանը պարբերաբար հրատարակում էր նվիրատուների ազգանուններն ու տված գումարները:

Նա գաղթօջախների հայությանը կոչ արեց կամավորներ տրամադրել Թուրքիայի դեմ պատերազմող պետություններին: Նա գտնում էր, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան վարում են բարբարոսական, զավթողական, թալանչիական, իսկ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան՝ ազատարար պատերազմ: Իրենց Հայրենիքի շահերը, արևմտահայության փրկության գործը պահանջում էին, որ հայերը օգնեն վերջիններիս: Նրանք չպետք է անտարբեր մնան և սպասեն, որ օտարը վճռի իրենց բախտը, բոլոր ազգերը արյունով են գրել իրենց պատմության ազատագրության էջերը: Հայերը ևս պետք է այդպես վարվեն:

Արտասահմանի երիտասարդությանն ուղղված կոչում 1915թ. մարտին Փորթուզայանը գրում էր. «Պատմությունը ցույց է տվել, թե քանի որ մի ազգ սուրը ձեռքին չի վազել պատերազմի

¹⁴ «Արմենիա», Մարսել, 1914, 25 նոյեմբերի:

դաշտ իր ազատությունը պաշտպանելու կամ վերականգնելու համար, նա ընացել է միշտ ստրուկ ուրիշներին»: Եվ ապա՝ «Ընկերներ, ժամը հնչել է սուրբ ազատության, թողեք, եկեք, ուր որ ալ լինեք, Ամերիկայում, թե Աֆրիկայում, աշխարհի որ ծայրում եք, կամավոր գրվեք հայ անունով ուր որ կարող եք քաղաքակիրթ դաշնակից բանակներում: Թող հայ անունը ևս հնչի ազատարար բանակների շարքում և երբ ունենանք մենք ևս քաջեր, քաղաքակիրթ մեծ ազգերը կտեսնեն հայի ազատ լինելու արժանիքը»¹⁵:

Մ.Փորթուզալյանի կարծիքով, Թուրքիայի ջախջախման հետևանքով հայությունը կարող է ձեռք բերել լիակատար ազատություն իր անկախության հռչակումով, ազատ ու բարգավաճ Հայաստանի ստեղծումով: «Այդ լուսաշող հեռապատկերն է, որ մեր հայրենիքի կարմիր հորիզոնի վրա ըղծալի տեսիլքի մը պես կուրվագծվի, ու սակայն այժմ սարսափահար և արյունազարդ Հայաստանի պատկերը միայն կա իրական»¹⁶: Ապա նշում է, թե՛ որքան էլ ծանր են հայերի տառապանքներն ու կորուստները, այնուամենայնիվ, նրանք պետք է գիտակցեն, որ իրենց ազատության ու անկախության նպատակները երբեք այնպես մոտ չեն իրականանալուն, ինչպես այժմ¹⁷:

Հրապարակախոսը գտնում էր, որ արևմտահայերը կարող են փրկվել նաև անցնելով «Ռուսիայի հովանավորության տակ»¹⁸: Պահը օրհասական է, հարկավոր է ամբողջ ուժով ու եռանդով կպչել գործին, «այժմ կամ երբեք»¹⁹ - գրում է Փորթուզալյանը:

Համարյա նույն դիրքերից հանդես եկավ նաև Արշակ Չոպանյանը: Արևմտահայերի փրկությունը տեսնելով Համաձայնության երկրների հաղթանակի մեջ՝ նա հայերին կոչ էր անում ամենուրեք կամավորներ գրվել Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրան-

¹⁵ Նույն տեղում, 1915, 31 մարտի:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, 1915, 10 մարտի:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, 1915, 31 մարտի:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, 1914, 25 նոյեմբերի:

սիայի բանակներում և արիաբար կռվել Քառյակ միության ու Թուրքիայի դեմ: «Ընենք ինչ որ կըրնանք, - գրում էր Չոպանյանը, - որպեսզի մենք ալ, վաղը աշխարհիս վերև ծագելիս արդարության արևին տակ, ազատամարտիկ ազգերում շարքին մեջ, ազատության արժանի քովը բարձրաճակատ կարենանք երևալ»²⁰: Չոպանյանը խնդիր էր դնում՝ անպայման օգնել հատկապես Ռուսաստանին, որովհետև Թուրքիայի դեմ տարած նրա հաղթանակը ազատություն կբերի արևմտահայությանը: 1914թ. դեկտեմբերի 24-ին, իր բարեկամներից մեկին հղած նամակում նա գրում էր. «Ռուսահայ հարաբերությունները լավ են ինչպես երբեք չեն եղած... նույնիսկ եթե էրզրունեն մինչև Սիս ռուսը գրավե և պարզապես կցե, նորեն հայուն համար շատ լավ է... Հայկական կյանքը, հայ լեզուն, կուլտուրան պիտի ծաղկին ու տիրապետեն»²¹: Չոպանյանը ենթադրում էր, որ ներկա պատերազմը հայերին բերելու է ոչ թե բարենորոգումների նոր ծրագիր, այլ՝ «իրական, արմատական, վերջնական ազատում»: Այդ ազատության տակ նա չէր հասկանում անկախություն, Տիգրան Մեծի ժամանակների Հայաստանի վերականգնում՝ գտնելով, որ «...ատիկա անկարելի է...», այլ՝ այնպիսի Հայաստան, որը Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանու տակ կարողանա «ապրել ինքնավար կյանքով մը, հայ կյանքով մը»²²:

²⁰ Չոպանյան Ա., Նամականի, Ե., 1980, էջ 120:

²¹ Նույն տեղում:

²² Տե՛ս Չոպանյան Ա., Հայաստանը թուրք լուծին տակ, Բոստոն, 1918, էջ 38:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ հայերը ամենակտիվ մասնակցությունն են ունեցել Առաջին համաշխարհային պատերազմում, իրենց արժանի ավանդն են ներդրել Թուրքիայի և նրա դաշնակիցների ջախջախման գործում: Ընդհանուր առմամբ, Ռուսական կայսրությունից պատերազմին մասնակցել է շուրջ 250000 հայ, Ֆրանսիայից, Անգլիայից և ԱՄՆ-ից՝ 50000, իսկ ամբողջ աշխարհից միասին վերցրած՝ ավելի քան 300000, որոնցից 60000-ը սպանվել կամ վիրավորվել է մարտերում¹: Բազմաթիվ հայեր պարզատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև ամենաբարձրագույններով: Պատերազմի տարիներին շատ հայ սպաներ ստացան նոր կոչումներ: Լ. Տիգրանյանից, Գ. Թումանովից, Յ. Բագրատունուց բացի, զեներալ-մայորի աստիճան ստացավ ևս 15 հայորդի, ինչպես՝ Իվան Վասիլի Յախվերդովը, Նիկոլայ Մեժլումի Մելիք-Շահնազարովը, Արսենի Սերգեյի Դյուլխանովը, Մովսես Բաբայի Սիլիկյանը, Ալեքսանդր Ռոմանի Մելիք-Ալավերդովը, Անդրանիկ Օզանյանը և ուրիշներ:

Հայ ժողովրդի զավակները մարտնչել են գրեթե բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակների կազմում, իրենց մարտական հմտությամբ և հերոսական սխրանքներով հարստացրել հայ ժողովրդի մարտական փառավոր ավանդույթները:

¹ Տե՛ս Очерк развития вопроса о развертывании армянских вооруженных сил в Петрограде в 1917г. – Приложение к книге: Kayaloff G., The Battle of Sardarapat, Paris, 1967, p. 99-100.

СОДЕРЖАНИЕ

ВВЕДЕНИЕ	5
ВОЙНА И ПОЗИЦИЯ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ КРУГОВ	5
ГЛАВА ПЕРВАЯ	20
УЧАСТИЕ АРМЯН В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ	20
ГЛАВА ВТОРАЯ	40
УЧАСТИЕ В ВОЙНЕ АРМЯН ДИАСПОРЫ	40
ЗАКЛЮЧЕНИЕ	48
ДОКУМЕНТЫ И МАТЕРИАЛЫ	50
ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ	81
ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ	81
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	97
ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՍԱԶԻՆ ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	97
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ	118
ՍԹՅՈՒՌ-ՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	118
ՎԵՐՋԱԲԱՆ	127

МУРАД КАРАПЕТЯН

**УЧАСТИЕ АРМЯН В ПЕРВОЙ МИРОВОЙ
ВОЙНЕ (1914 - 1918 гг.)**

Компьютерная верстка – Вера Папян

Подписано к печати 22.08. 2014 г.

Формат 60 x 84 ¹/₁₆. Печ. л. 8,25

Тираж 150 экз.

Цена договорная.



Карапетян Мурад Левонович

Родился 3 июля 1965 г. в г. Ереване. Окончил среднюю школу им. С. Лисницяна N 34 в 1982 г., исторический факультет Ереванского государственного университета с отличием (1990 г.) и аспирантуру ЕГУ (1993). С 1984 по 1986 гг. служил в Советской армии. С 1994 по 1998 гг. работал преподавателем кафедры Истории армянского народа Ереванского государственного университета.

С 1998 г. работает старшим, а с 2004 г. ведущим научным сотрудником Института истории НАН Республики Армения. С 2002 по 2004 гг. по совместительству работал заместителем директора по научной части музея этнографии и истории национально-освободительной борьбы мемориального комплекса Сардарабад МО РА.

Доктор исторических наук (2004). Один из ведущих специалистов в области истории армянских национальных воинских формирований 1914 – 1920 гг. Автор 6 книг – “Армия Республики Армения (1918 – 1920 гг.)” (1996), “Армянские добровольческие дружины и национальные батальоны на Кавказском фронте (1914 – 1917 гг.)” (1999), “Генерал-лейтенант Ованес Ахвердян” (2003, на русск. и арм. яз.), “Воины – армяне в русской армии (конец XIX – начало XX века)” (2008), “Источниковедческий очерк военной истории военачальников-армян русской императорской армии, армянских формирований и Республики Армения (конец XIX – начало XX века)” (2010), “Родина и служба” (в соавторстве) (2002), и около 50 научных статей по проблемам формирования армянских воинских формирований в годы Первой мировой войны 1914 – 1918 гг., создания армии Республики Армения в 1918 – 1920 гг., жизни и деятельности видных военачальников армянского народа XIX – XX вв., а также публикаций архивных документов. Награжден медалью “Анрапик Озаян”, почетными грамотами Национальной Академии наук и Министерства обороны Республики Армения.

948.925

K 21